№ 255 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19

1906

ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19 № 255

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ

մարմնի հանդիսաւոր փոխադրութիւնը բնակարանից Վանքի մայր եկեղեցին տեղի կունենայ այսօր, շաբաթ, նոյեմբերի 18-ին, ցերեկվայ ժամը 3-ին։ Ապա, երեկոյեան ժամը 7-ին Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հանդիսաւոր հոգեհանգիստ։ Կիրակի, նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին կը սկսվի պատարագը, իսկ ժամը 12-ին՝ օծման և թաղման հանդէսը։ Թաղումը Վանքի բակում։ 2—2

Կիրակի, նոյեմբերի 19-ին, պատարագից յետոյ Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ ի յիշատակ քառասներորդ օրվայ վախճանման

Ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեանի

որի մասին հանգուցեալի այրին, որդիքը և քոյրը յայտնում են ազգականներին և ծանօթներին։ Պատարագը կը սկսվի 10 1/2-ին, իսկ հոգեհանգիստը կը լինի ժամը 12-ին։
(շ. կ.) 2—2

Թադէոս, Արեգնազան, Լևոն, Բարդուղիմէոս և Գրիգոր Ճէպէջեանները, Շուշանիկ Ռմանեանը և Հայկանդուխտ Տէր-Կիրակոսեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց ծանօթներին և բարեկամներին, առաջինը՝ իր թանկագին եղբօր, երկրորդը՝ իր ամուսնու, իսկ վերջինները իրանց անմոռանալի հօր—դերձակ

Գրիգոր Մարգսեան Ճէպէջեանի

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 15-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, առաւօտեան ժամը 10-ին (Միքայէլեան փողոց, № 13), դէպի Թանդոյեան եկեղեցին, այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ Ամբիծքը շաբաթ երեկոյեան ժամը 6-ին։
(շ. կ.) 2—2

Յովհաննէս Նաւասարդեան Արեւշատեանցն իր որդկերանցով և Արշակ և Զոհրաբ Սայեադեան Ասոմեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը՝ իր ամուսնու և երկրորդը՝ իր քրոջ

Վարդանուշ Սայեադեան Արեւշատեանցի

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ ամսիս 15-ին։ Ամբիծքը շաբաթ, ամսիս 18-ին, երեկոյեան ժամը 6-ին, իսկ յուղարկաւորութիւնը՝ կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից, Գեօրգևսկի պլօշչադ, տուն Ոսկանեանցի, № 20, դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ 2—2

ԱԲԳԱՐ ՄԻՍԱԿԵԱՆ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՄԷԼԻՔ-ԱՌԱՔԵԼԵԱՆՑՆԵՐԸ սրտի կսկիծով յայտնելով առաջնի հօրեղբօրորդի, երկրորդի տագր՝

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ

(ՄԷԼԻՔ-ԱՌԱՔԵԼԵԱՆՑԻ)

մահը, յայտնում են, որ թաղումը տեղի կունենայ այսօր, կիրակի, նոյեմբերի 19-ին, ժամը 10—12-ին Վանքի եկեղեցու բակում։ 1—1

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որին աշխատակցում են նկարիչներ՝ պ.պ. Շամշինեան, Զոմմեր, Ճէպէջեան, Ռոդդեռ, «Սլաք» «Սեթառ», «Միֆասոլ» և ուրիշները։

Տարեկան բաժանորդները կը ստանան պրեմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ) գունատիպ պատկեր հայկական կեանքից, 2) Պատի տախտակ, պատկերազարդ օրացոյց 1908 թ.

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Երկրորդ համարը լոյս կը տեսնէ երկուշաբթի, նոյեմբերի 20-ին։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէջեան
(շ. կ.) առ. 2—2

Հայկական Դեմոկրատական Կուսակցութեան Ժամանակաւոր Կենտրոնական Բիւրօն

Յայտարարելով կուսակցութիւնը կազմված՝ համաձայն առաջին ընդհանուր ժողովի որոշման, հրաւիրում է իր դեկլարացիայի մէջ յայտարարված սկզբունքների համակրողներին՝ համախմբվել և կազմել տեղական ճիւղեր իր կոմիտէներով և այդ մասին յայտնել կենտրոնական բիւրօյին։

Ժամանակաւոր բիւրօյի անդամներ՝—Ս. Յարութիւնեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Ալէք. Քալանթար, Հ. Առաքելեան, Յ. Սանդիարեան, Ք. Վէրմիշեան, Միք. Աթաբէգեան, բժիշկ Բ. Աղասարեան, բժ. Տ. Գէորգբէգեան, Ց. Ղուկասեան, Լ. Դանիէլեան, բժ. Մ. Մովսիսեան, Արշ. Մխիթարեան։
առ. (ա. օ.) 4—10

Կիրակի, նոյեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 11-ին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

նշանակված է

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

արտակարգ ընդհանուր ժողով.

Զբաղմունքի առարկաները՝

1) Հանգուցեալ դերասան՝ Գ. Պետրոսեանի ընտանիքը ապահովելու խնդիրը։
2) Մասնաժողովի զեկուցումը Ակումբի մասին։
3) Ընտրութիւններ վարչութեան մէկ անդամի փոխանորդի և վերստուգող մասնաժողովի անդամների։

առ. (19, 23, 26) 1—3

Բացված է բաժանորդագրութիւն

„ՀՈՍԱՆՔ“

Քաղաքական, տնտեսական եւ հասարակական օրաթերթի

Բաժնեգինն է՝ ամսական—50 կ., մինչև տարվայ վերջը 60 կ.։ Հատով—3 կոպ.։

Օրաթերթը կը սկսի լոյս տեսնել նոյեմբերի 23-ից։

Դիմել՝ Тифлисъ, Николаевская ул. № 9, Редакція «Осанкъ».
առ. 1—4

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԻՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1–2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշու, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, ամենայն օր 1—2 ժ., ուրբաթ 3—4 ժ.
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՒԿՍԿԻ.—Երեխ., չորեք., շաբ. 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԷՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԴՕՐՕՖՑՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵԱ. ՊԱԻԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։
առ. (ա. օ.) 6—144

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հայ դրամատիկ ընկերութեան խմբի
ներկայացումը
փոխանակ երկուշաբթի, նոյեմբերի 20-ին,
կը կայանայ
Երկուշաբթի, նոյեմբերի 27-ին,
Մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ և պ. Օհանեանի
Յօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ ընկերութեան։
կը ներկայացվի՝

Իրաւազուրկ կինը

Դրամա 5 արար., Վլադիմիրօվայի, թարգ. Լ. Մելիք-Ադամեանի.

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին։

Տեղերի գները բենեֆիսային են։

Ամսիս 20-ի համար վերցրած տոմսակները վերապահում են իրանց ույժը ամսիս 27-ի համար։

Վարչութեան հերթապահ անդամ՝
Ա. Խատիսեան
Ռեժիսսեօր՝ Յ. Աբէլեան
առ. 1—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Սանահին ամարանոցում, Ալավէրդի պլատֆորմայի մօտ, Կարսի երկաթուղու գծի վրա, Բէտաղնօ գետի երկարութեամբ ընկած և չը վաճառված՝

Ամարանոցի հողաբաժինները

Դիմել (կարելի է և գրաւոր) Թիֆլիս, Վելիկօկնեաժեսկի փողոց, տ. № 18, Մուրադ Օգանէզովին—փայտի պահեստում։
(ու. կ.) առ. 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ
քթի, կոկորդի եւ ականջի
հիւանդութիւնների

Ընդունում է
ցեր. 1—2 ժ.
երեկ. 5—7 ժ.
ամեն օր բացի ուրբաթ

Միխայլօվսկի պրօսպ., տ. Ֆորրերի № 119.
(կ. չ.) առ. 2—5

ԼԱԿՏՕԲԱՑԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՕՖ. ՄԵՉՆԻԿՕՎԻ

Ցուցմունքների համաձայն պատրաստվում է

ՊՐՕՎԻԶՕՐ

Ա. Ս. ԿԼԻԲԱՆՍԿՈՒ

Խիմիկօ-բակտերիօլոգիական կաբինետում, Վօրօնցօվի արձանի դիմաց։

Հեռախօս № 389.
(կ.) առ. 6—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արիստակէս Սեդրակեանը. Վերջին տեղեկութիւններ. Ցաւակցական հեռագրներ. Պըսակներ և պատգամաւորութիւններ. Իմ յիշողութիւնները Սեդրակեանի կեանքից. Ինչու համար սիրում էի նրան. Սրբազան Սեդրակեան. Նամակ Պետրօվսկից. Զուգադիպութիւն. Գիւղական ուսումնարանների վիճակը Ջիւանշիրում. Աւետրական դպրոցի շուրջը. Կոչ Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի Թեմի ժողովրդին. Զարմանալի է. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԸ

I

Այսօր հողին է յանձնվում Արիստակէս Սեդրակեանի մարմինը։

Այսօր, երբ հայ հասարակութիւնը իր ներկայացուցիչներով պէտք է ներկայ լինի հասարակական գործչի աճիւնների հրաժեշտին, Սեդրակեանի խոշոր դէմքը կերպարանվում է մեր առաջ իր բոլոր ամբողջութեամբ։

Սեդրակեանը հանդիսանում է իբրև բարոյական մի բնաւորութիւն, որ իր անձնաւորութեամբ ներկայանում էր թէ որոշ ծրագիր և թէ այդ ծրագրի իրագործութեան նուիրված անյողդողդ մի գործող։

Նրա մտածողութիւնը և գործունէութիւնը ուղղված էին դէպի ժողովրդի առաջադիմութիւնը և չէին սայթաքվում դէպի մասնաւոր և անձնական դիտումների շաւիղները։

Հեռու համակերպվելու, հաճոյանալու և ծրագրական զիջումներ անելու քայքայիչ թուլութիւններից, նա խոչընդոտ և անյարմար մի անձնաւորութիւն էր դառնում շատ վարչական անձերի և յոխորտացող «Չոչերի» համար, բայց դրա փոխարէն հանդիսանում էր իբրև մի անընկճելի ժայռ իր գաղափարակիցների և հասարակական բարեկամների համար։

II

Նայենք այդ անձնաւորութեան գործերի վրա մի քանի շրջաններում։

Սեդրակեանը լաւ գիտէր, որ ամեն մի վարչական և հասարակական գործունէութեան բեղմնաւորութեան համար անհրաժեշտ է, որ վարչական կարգերը լինեն բաւարար և գործողները լինեն ձեռնհաս և շիտակ անձեր։

Եւ ահա մենք տեսնում ենք, որ ամեն տեղ, ուր որ նա հաստատվում է թէ իբրև թեմակալ առաջնորդ, թէ իբրև սինօդի անդամ, թէ իբրև տեսուչ, ու վանահայր, նա ամեն տեղ իսկոյն ձեռնարկում է մաքրելու և ախտահանելու գործին, կանոնաւորում է հիմնարկութիւնների գործավարութիւնը և աշխատում է գրաւել այնտեղ բանիմաց և մաքուր պաշտօնեաներ։

Եւ անշուշտ նա հէնց առաջին իր քայլերից վաստակում էր դժգոհների խմբեր, սակայն նրա անյողդողդ բնաւորութեան առաջ յետ էին քաշվում նրանք, իսկ գործի դրական կողմը գրաւում էր այն բոլոր անձերին, որոնց համար թանգ էին հիմնարկութիւնների նպատակը և պատիւը։

III

Իբրև հոգևորական գործող նա երկարատև և յամառ կռիւ է մղել տգէտ քահանաների ձեռնադրութեան դէմ և ամենակտրական կերպով առաջ է մղել քահանայացուների որոշ կրթական ցենզ ունենալու հարցը։

Որքան էլ առաջին անգամից հասարակ մի գործ թուայ այդ դիտաւորութեան իրագործումը, սակայն գործնական կեանքի մէջ նա հանդիպեց այնպիսի ծանր դժուարութիւնների և անախորժ դիմադրութիւնների, որ նոյնիսկ մինչև այժմ իրականութիւնը լի է արգելքներով և խոչընդոտներով նրա գործնական ծրագրի դէմ։

Եւ արդարև Արիստակէսի բուռն բողոքներից յետոյ տգէտների քննադատութեան դէմ, շատ թեմերում և որ սոսկալին է՝ Էջմիածնի պարիսպների մէջ ձեռնադրվեցին շատ տգէտներ և ուղարկվեցին մեր գաւառները՝ ծանր բեռ դառնալու ժողովրդի մէջքին։ Խաւարամիտները և մասնաւոր հաշիւներով ղեկավարվողները հեշտութեամբ ձեռնադրում էին տգէտներին, բայց չէին մտածում, որ այդ ձեռնադրվողները մինչև իրանց կեանքի վերջը, ամբողջ տասնեակ տարիներ պէտք է մնան կպած խեղճ ժողովրդին։

IV

Հաւատալով, որ երիտասարդ, թարմ և կրթված ույժերը կարող են դառնալ գործողներ և փոխադարձ աջակիցներ թէ հիմնարկութիւնների և թէ հասարակական կեանքում, նա խրախուսում էր երիտասարդ ույժերին և առաջ քաշում։ Նրա խրախոյսներով և քաջալերութիւններով շատերը հրաւիրվեցին գործելու Էջմիածնում և ուրիշ տեղերում։

Այդ հրաւիրված անձերի մէջ եղան անաջողներ և այնպիսիներ, որոնք կատարեցին կրծքի վրա տաքացրած օձերի դերեր, բայց և այնպէս զգալի կերպով ստուարացաւ ուշիմ և բանիմաց գործողների թիւը։

Լաւ գիտենալով, որ իւրաքանչիւր պաշտօնեայ պէտք է փոքր ի շատէ բաւարար կերպով ապահովված լինի, որպէսզի կարողանայ նուիրվել իր պաշտօնին, նա հերթական դարձրեց քահանաների վիճակի բարւոքման հարցը և հիմք դրեց քահանաների ապահովութեան գանձարանի հաստատութեան Թիֆլիսում։ Քահանաների վիճակի բարւոքման հարցը դեռ լուծված չէ, բայց դրված է։

V

Վարչական բարեկարգութիւնների, պաշտօնեաների ազնիւ և շիտակ կազմի և ապահով վիճակի ամենամերձաւոր արդիւնքներից մէկը պէտք է լինէր սիմօնականութեան, կաշառակերութեան և խնամէութեան վերացումը Էջմիածնից և ուրիշ հիմնարկութիւններից։ Այդ արատները չափազանց ամօթաբեր և վիրաւորական էին մի ժողովրդի համար, որ ոտք է դրել քաղաքակրթութեան և կուլտուրայի ճանապարհի վրա։ Փողով, անձնական ազդեցութիւններով շատ տըխուր գործեր էին կատարվում մեր իրականութեան մէջ, որոնք վայր էին գցում թէ հիմնարկութիւնների և թէ պաշտօնեաների անունը։

Միևնոյն ժամանակ Սեդրակեանը պահանջ էր դնում, որ հիմնարկութիւնները և պաշտօնեաները կանոնաւոր հաշիւներ տային իրանց գործունէութեան և իրանց ձեռքն անցած գումարների մասին։ Եւ ինքը հսկում էր, որ իր տեսչութեան յանձնած թեմերում և հիմնարկութիւններում զգացվի պատասխանատւութեան և հաշւետւութեան մեծ պարտականութիւնը։

VI

Սեդրակեանի խոշոր հոգսերից մէկն էր Էջմիածնապատկան կալուածների բարեկարգութեան և խելացի տնտեսութեան խնդիրը։ Նա շատ մանրամասն զբաղվել է կալուածների վիճակի ուսումնասիրութեամբ և ժողովել է նիւթեր, որոնց մի մասը մշակել է ապագայ հրատարակութեան համար։

Այն կարճ ժամանակամիջոցում, երբ Էջմիածնի կաթողիկոսական գահը թափուր էր և Սեդրակեանը Երեմիա եպիսկոպոսի հետ վարում էին Էջմիածնի գործերը, հրաւիրվեցին մասնագէտներ և սկսեցին մշակվել ծրագիրներ կալուածքների կառավարութեան մասին։ Սակայն այդ գործը մնաց անկատար նոր առաջ եկած հանգամանքների շնորհիւ։

Եւ այժմ, երբ կալուածքները նորից վերադարձված են հայ ժողովրդին, շարունակվում է նոյն անխնամ վիճակը, որը տիրում էր առաջ և որը այնքան վիշտ և հոգս էր պատճառում ժողովրդի հոգատարներին և նրանց թւում մեծապէս Արիստակէս Սեդրակեանին։

VII

Վերջին տարիները նա մեծ հոգս ու խնամք տարաւ աջողեցնելու Աստրախանի թեմական դպրոցի հիմնարկութիւնը և մի քանի խոշոր արգելքներ ու խոչընդոտներ վերացնելուց յետոյ՝ վերջապէս կարող եղաւ իրագործել իր իղձը և այդ գործը մեծ մխիթարութիւն էր պատճառում նրա սրտին։

Սեդրակեանը դիւրազգաց էր դէպի մեր ժողովրդի կեանքը։ Եւ մեր ժողովրդական աղէտների ժամանակ, ինչպէս օրինակ երկրաշարժերի, սովի, հայ-թուրքական ընդհարումներից առաջացած աղէտների ժամանակ ամենաառաջիններից մէկն էր նա լինում, որ արձագանք էր տալիս և բաւական խոշոր գումարներ յատկացնում կարօտեալների օգտին։

Եւ նրա օրինակին հետևում էր նրա ամբողջ թեմը, տալով նուիրատուների ամբողջ ցուցակներ։

VIII

Կարօտ մեծ վարչական և կուլտուրական գործունէութեան, ունենալով մի խոշոր ծրագիր իր համար, նա ոգևորվեց վերջին կաթողիկոսական ընտրութեան նախօրեակում և յոյս ունէր թէ վերջապէս կաջողվի սկսել գործ, իսկական գործ։

Եւ նա ոգևորված երիտասարդի նման ուրախութեամբ յանձն առաւ գնալ Երուսաղէմ նոր կաթողիկոսին բերելու և ուղեկցելու։

Բայց իրականութիւնը, Էջմիածնի դաւերը, խաւար ույժերի համախմբվելը և մեր հասարակական կարծիքի տհասութիւնը եկան լեռնացան Սեդրակեանի առաջ և նա հեռացաւ դէպի իր պատւաւոր աքսորավայր Աստրախանը, որտեղ նուիրվեց թեմի վարչական և իր սիրած գրական գործերին։

Նա դեռ մեծ աշխոյժ և եռանդ ունէր գործելու, բայց մահաբեր ախտը բոյն էր դրել նրա մէջ և այսօր մենք հողին ենք յանձնում վաղամեռ գործչին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց, «Իրշադի» սեփական թղթակիցը՝ դօկտոր Մեհմանդարօվ հեռագրում է, որ նոյեմբերի 15-ին հայոց թաղամասում գնդակի 10 հարուածներով սպանվել է թուրք յայտնի կալուածատէր Սիւլէյման-աղա Շէքինսկին։ Սպանողը, որ ձերբակալված է, յանձնվում է զինուորա-դաշտային դատարանին։ Սիւլէյման աղան, ասում է թուրք թերթը, Շուշու ամենահռչակաւոր խաների սերնդից էր. Նրա կալուածների մեծ մասը հայերով էին բնակված, որովհետև գտնվում էին հայկական մասում։ Շուշու կռւի ժամանակ այդ կալուածները գրաւվեցին հայերի կողմից. հայերը ոչ միայն չէին ուզում նրա հասոյթներն ու մալջհաթը տալ, այլ և գուցէ ցանկանում էին նրա՛ գիւղերում ունեցած իրաւունքից զրկել, վերջին տեղեկութիւնների համաձայն։ Շուշու գեներալ-նահանգապետ Բաուէրը մեծ ջանք գործ դնելիս է եղել, որ գիւղացիները վճարեն կալուածատէրերի իրաւունքները։ Հաւանական է, որ Սուլէյման-աղայի սպանութիւնն էլ արդիւնք է այս վերջին հանգամանքի։

—

Ղարաքիլիսա, 7 նոյեմբերի

Այս գիշեր այստեղ մի չը տեսնված դժբաղդութիւն է պատահել։ Գայլը պատառել է միտապէս այստեղ աշխատող մի 20 տարեկան թուրքի։ Բռնել է դէմքից և պարանոցից, ուժասպառ անելուց յետոյ պատառել է փորոտիքը, կրծքի վանդակում եղածներով կերել է, մնացել են կողերի ոսկորները։ Փորոտիքից ներքև չէ կպել և չէ վիրաւորել։

Խօսւում է գիշերները հսկողութիւն նշանակելու և բռնել աշխատելու մասին։ Երևի բորենի է և էջմիածնի գաւառում այնքան զոհեր տանող կենդանուց, որովհետև նոյն տեսակ է վարվել զոհի հետ։

—

Մեզ հաղորդում են, որ նոյեմբերի 16-ին, հինգշաբթի օրը, լուսադէմին, Ղազախից ոչ հեռու կատարվել է հետևեալ սպանութիւնը, որ առաջ ենք բերում մօտաւոր մանրամասնութեամբ։

Ղազախի գաւառի Ջինչին գիւղացի երկու հայեր—հայր ու որդի, միասին սայլով գնում են Ղազախ տօնավաճառում հարսանիքի համար անհրաժեշտ կտորեղէններ (չորեր) առնելու համար։

Նրանք իրանց գիւղից դուրս են գալիս լուսադէմին, մօտաւորապէս ժամի 3-4-ին։ Ղազախից մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Թաթլու գիւղի մօտերում նրանց պատահում են չորս զինված թուրքեր։ Վերջիններս շրջապատելով հայր ու որդուն, դուրս են հանում նրանց ճանապարհից և տանում դէպի անտառ։

Որդին նկատելով, որ չարագործները նպատակ են դրել ոչ միայն կողոպտելու, այլ և սպանելու նրանց, օգուտ քաղելով յարմար րոպէից փախչում է։

Չարագործները մի քանի գնդակներ են արձակում նրա ետևից, որոնք բարեբաղդաբար կպչում են փախչողի փեշերին միայն։ Վերջինս գիտութեամբ վայր է ընկնում խոտի դէզերի մօտ, և թուրքերը՝ կարծելով նրան սպանված, հանգիստ են թողնում և տանում հօրը։

Թուրքերի հեռանալուց յետոյ տղան վեր է կենում և փախչում հայ Թաթլու գիւղը դէպքի մասին յայտնելու սարաժնիկներին։

Վերջիններս չորս հոգով, մի քանի էլ հայ գիւղացիներ իրանց հետ առած, շտապում են դէպքի տեղը, որտեղ են և գտնում երիտասարդի հօրը արդէն սպանված, իսկ չարագործները փախել անյայտացել էին։

Նկատելով մօտակայքում թուրք նախրապաններ, սարաժնիկները կալանաւորում են նրանց բոլորին և պահանջում ցոյց տալ ոճրագործներին։

Վերջիններս խնդրում են իրանց բաց թողնել և յայտնում են մարդասպանների անունները, որոնք չորսն էլ թուրք Թաթլու գիւղացիներ են լինում։

Սարաժնիկները գնում են թուրք Թաթլու գիւղը և տանուտէրի օգնականից պահանջում յանցաւորներին։ Նրանցից մէկը գիւղումն է լինում, նրան կալանաւորում են, իսկ միւսները Ղազախ են լինում գնացած. տանուտէրի օգնականը սարաժնիկների հետ միասին գնում է Ղազախ և այնտեղի տօնավաճառում կալանաւորում երեքին էլ, որոնցից մէկի գրպանում նոյնիսկ գտնում են սպանված հայի գրպանից հանված 50-60 րուբլի փողերը։

Այս սպանութեան դէպքը մեծ յուզմունք է առաջացրել հայ ազգաբնակութեան մէջ, որովհետև ճանապարհների հաղորդակցութիւնը սկսում է վտանգվել։

Եթէ տեղական ադմինիստրացիան խիստ միջոցների չը դիմէ պատժելու յանցաւորներին և ապահովելու անցորդների երթևեկութիւնը, կարող են գիւղացիութեան համար վնասակար հետևանքներ առեղծվել, նոր բաղդութիւններ առաջ գալ և խախտել այն հանգստութիւնը, որ այնքան մօտ է ազգաբնակութեան աշխատասէր ու խաղաղասէր տարրերի սրտին և անհրաժեշտ նրա բարեկեցութեան համար։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

Թիֆլիս, խմբագրութիւն «Մշակի», պատճէնը հայոց առաջնորդին.

Ողբում ենք Սեղրակեան արքեպիսկոպոսի ցաւալի մահը, հայցում ենք խաղաղութիւն նրա հոգուն։

—

Պատրիարք՝ Մաղաքիա Օրմանեան

«Բազմավէպ» ամսագրի խմբագրութիւնից, Վենետիկից.

Ընդունեցէք մեր կենդանի ցաւակցութիւնները. յարգանք նրա փառաւոր յիշատակին։

—

Թաւրիզից, առաջնորդ Եղնիկ արքեպիսկոպոսից.

Սեղրակեան սրբազանի տարաժամ մահվան առիթով ցաւակցութիւններս յայտնելով, Ատրպատականի հայութեան կողմանէ խնդրեմ պսակ դնել։

Առաջնորդ Եղնիկ եպիսկոպոս

—

Բագու, 18 նոյեմբերի

Բագուի հայ հասարակութեան և հոգևորականութեան անունից ողբում եմ Արիստակէս արքեպիսկոպոսի, մեր եկեղեցու սիւներից մէկի վաղաժամ մահը։

Զաւէն վարդապետ

—

Գորի, 18 նոյեմբերի

Հոգեկան վշտով արտայայտում ենք ցաւակցութիւն հայ յիշատակարժանի հավ. Արիստակէս Սեղրակեանի մահվան առիթով։

Գրիգոր Խիթարեան

Կիսլովոդսկ, 18 նոյեմբերի

Կիսլովոդսկ քաղաքի հայերը արտայայտում են իրանց խորին վիշտը Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանի վաղաժամ մահվան առիթով, յանձին որի հայ ժողովուրդը կորցրեց ազնիւ, անշահասէր հովւապետի, տաղանդաւոր վարչական մարդու, լուսաւորութեան և առաջադիմութեան համոզված մարտնչողի։ Նրա քառասնամեայ գործունէութիւնը առաջարկում ենք յաւերժացնել արժանի յիշատակով։

Տէր-Յովհաննիսեան

—

Շուշի, 18 նոյեմբերի

Հայ ժողովրդին հասած և երկար ժամանակ չը փոխարինվող կորուստը՝ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանի վաղաժամ մահվամբ, որի անզուգական ընդունակութիւնները, տաղանդը, ուժեղ կամքը և լուսամիտ հայեացքը էջմիածնի ծանր դէպքերի ներկայ դերում հարկաւոր էին աւելի քան երբևիցէ, առեղծեց հոգևորական աշխարհում լայն դատարկութիւն, որը դժուար թէ շուտով ծածկվի։ Ղարաբաղը երկար կը յիշէ հանգուցեալի բեղմնաւոր, իդէալական ծառայութիւնը, երբ նա երիտասարդ էր, լի ուժերով, լի պայծառ յոյսերով ապագայի մասին։ Խնդրում ենք պ. Համբարձում Առաքելեանին ներկայ լինել թաղմանը մեր կողմից։

Բաղդասարեանց Քալանթարեան, Շահբաբեան, Շահնազարեան, Փիրջանեան, Մելքումեան, Օհանեան, Ղալամեան, Յովհաննիսեան, Պետրոսեան, Փիրումեան, Մանգասարեան, Տէր-Մարտիրոսեան, Թորոսեան, Խալաֆեան, Դանիէլեան, Վարունցեան, Վարդազարեան, Կիրակեան, Տէր-Յակոբեան, բժ. Դոնդախսազեան, Առստամեան, Ծատուրեան, Բալասեան, Եսայեան, Իշխանեան, Դօլուխանեան, Շահգալդեան, Միւլքեան, Ջամուշեան, Ամբրումեան

—

Աստրախան, 17 նոյեմբերի

Անմոռանալի Արիստակէս արքեպիսկոպոսի մահվան առիթով սրտի ցաւօք յայտնում եմ ցաւակցական զգացմունքներս այն մեծ կորուստի համար, որ յանձին նրան Աստրախանի թեմը կորցնում է իր լուսամիտ և անխոնջ վարիչին։

Սիմէօն Մարտինովիչ Պօպով

—

Ստաւրոպօլ, 17 նոյեմբերի

Ստաւրոպօլի հայ համայնքը դառնապէս վշտացած Արիստակէս արքեպ. Սեղրակեանի անակնկալ մահով, իր խորին ցաւակցութիւնն է արտայայտում յանձին հանգուցեալի, ողբալով բոլոր պրօգրէսիվ տարրերի ծանր կորուստը, որպէս նշանաւոր վարչական անձի, հասարակական և գրական ազնիւ ու անբիծ գործչի։

Պսակի փոխարէն փոխադրվում է հանգանակված 50 րուբլին յօգուտ անդրկովկասեան հայ արհեստաւորների։

Քահ. Տէր-Յովհաննիսեան, ուսուցիչ Տէր-Գրիգորեան

—

Ղըլ-Արվաթ, 17 նոյեմբերի

Ղըլ-Արվաթի հայ համայնքը իր խորին վիշտն է արտայայտում ականաւոր հոգևորական գործչի, յարգված ու սիրելի թեմական առաջնորդի մահվան առիթով և խնդրում է յայտնել հանգուցեալի ազգականներին։

Մեժլումեան

—

Միխայլովօ, 17 նոյեմբերի

Անկեղծ վշտով յայտնում եմ ցաւակցութիւնս անմոռանալի եպիսկոպոս Սեղրակեանի մահվան առիթով։

Սուրամի հայոց ուսումնարանի հոգաբարձութեան նախագահ՝ Ստեփան Գրձելեան

—

Ելենօվկա, 17 նոյեմբերի

Ցնցված՝ մեծարգոյ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանի անսպասելի մահով, խօսք չեմ գտնում արտայայտելու այն անհուն թախիծն ու վիշտը, որ համակել է ինձ այդ խոշոր և անփոխարինելի կորուստի պատճառով։

Բժիշկ Վարդանեան

—

Հին-Նախիջևան, 17 նոյեմբերի

Իմ հօտի հետ միասին ողբում եմ հայ եկեղեցուն ու ժողովրդին հասած անմխիթարական վիշտը, Սեղրակեան արքեպիսկոպոսի մահը։

Լևոն վարդապետ

—

Ղուբա, 18 նոյեմբերի

Արիստակէս արքեպիսկոպոսի անսպասելի մահը մեծ վիշտ պատճառեց մեզ։ Արտայայտում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնը։

Մելիք-Դադայեան, Բօղդանեանց, տ. Բարսեղեան, Մարտիրոսեան

—

Ախալքալաք, 18 նոյեմբերի

Անկեղծ սգում ենք այն խոշոր կորուստը, որ ի դէմս անփոխարինելի հոգևորական Արիստակէսի, շնորհալի և արդարասէր մարդու՝ մենք ունեցանք։

Յարգողների կողմից՝ Ոսկանեան վարդապետ, Մաղաքեանց, Յարութիւնեանց, Գրիգորեանց Հայրապետ

—

Քութայիս, 18 նոյեմբերի

(Եփրեմ վարդ. Սուքիասեանին).—Խնդրում ենք յայտնել մասնաժողովին, որ Քութայիսի հայ հասարակութիւնը կայծակի արագութեամբ սարսափահար է հանճարեղ և պանծալի հովւապետի և մեր նախկին բազմաշխատ թեմակալ առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեանի մահվամբ։

Նա մեռաւ իբրև մահկանացու, սակայն նրա անունը անմահ կը մնայ հայ եկեղեցու պատմական գրականութեան մէջ։ Քութայիսի հայ հասարակութիւնը իր անսահման ցաւակցութիւնն է յայտնում հայկազեան ազգի անփոխարինելի կորստեան առիթով։

Թաղմանը մերներկայացուցիչներն են. Արշակ Խուբէրեան, Տէր-Յովսէփ Ամիրաղեան, երեցփոխ Յակոբ Ալիբէկեան

—

Աստրախան, 18 նոյեմբերի

Խնդրում ենք «Մշակի» խմբագրութեանը սոյն հեռագիրը յանձնել թաղման մասնաժողովին դագաղի վրա կարդալու համար, նոյնպէս և տպագրել.

Մեր ամենից յարգված արհիապետ Արիստակէսի մահվան լուրը խոր վշտով համակեց մեր սրտերը։

Մեռաւ այն եպիսկոպոսը, որ անդադար մաքառում էր խաւարի դէմ, մանաւանդ՝ աշխատում էր մաքրել մեր հոգևոր ասպարէզը այդ չարիքից։

Մենք, որ առաջիններն ենք նրա ջանքերով ու օգնութեամբ սեմինարիական կրթութիւն ստացող աստրախանցիների մէջ, այսօր ողբում ենք այդ մեծ, ազնիւ, անշահասէր բարերարի և կրթութիւն տարածողի կորուստը։

Հանգիստ քո աճիւնին, թանկագին ուսուցիչ։

Քահանաներ՝ Դաւիթ Բարտաշեան և Սարգիս Ասլանեանց

—

Օդեսսա, 17 նոյեմբերի

Միացնում եմ իմ անկեղծ ցաւակցութիւնը արժանաւոր հովւի՝ Արիստակէս Սեղրակեանի մահվան առիթով։

Ոսկանեան

—

Ախալցխա, 18 նոյեմբերի

Յայտնում ենք մեր խորին ցաւակցութիւնը այն մարդու մահվան առիթով, որ իր կենդանի ժամանակ խոշոր դեր է խաղացել, իբրև հոգևորական, անկաշառ հասարակական գործիչ, եռանդուն վարչական անձ, և եկեղեցական գործերի վերանորոգիչ։

Ուսուցիչների մի խմբի կողմից՝ Արամ Գրիգորեան

ՊՍԱԿՆԵՐ, ՊԱՏԻՒԱՄԱՏՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Մշակի» խմբագրութիւնը մի պսակ դրեց Արիստակէս Սեղրակեանի դագաղի վրա այս մակագրութեամբ. «Հասարակական մեծ գործիչ և «Մշակի» անկեղծ բարեկամ՝ Արիստակէս Սեղրակեանին, «Մշակի» խմբագրութիւնից»։

Թաւրիզից Հայուհեաց Բարեգործական Միացեալ ընկերութիւնը խնդրում է հեռագրով պ. Հ. Առաքելեանին պսակ դնել Արիստակէս Սեղրակեանի դագաղի վրա։

Թեհրանից, հայ հասարակութեան կողմից Աբէլ քահանայ Սուքիասեանցը յայտնում է, որ Արտէմ Թաթուլօվին է յանձնված լինել ներկայացուցիչ արքեպիսկոպոս Սեղրակեանի թաղման ժամանակ, դնելով պսակ, մակագրութեամբ՝ «Շիտակ մարդուն, անկաշառ հովւին, տաղանդաւոր վարչական անձին, Թեհրանի հայ հասարակութիւնից»։

—

Թիֆլիսի Հայոց Դրամատիքական խումբը, ի նշան յարգանքի և սգոյ, որոշել է յետաձգել ներկայացումը։

—

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնը որոշել է վարչութեան ամբողջ կազմով ներկայ լինել թաղմանը։

—

Յովնանեան դպրոցը որոշել է իր հոգաբարձութեան և ուսուցչական ամբողջ կազմով ներկայ լինել թաղմանը։

—

Թիֆլիսի քահանաների խումբը ի նկատի ունենալով, որ հանգուցեալը հիմնադիր էր քահանաների ապահովութեան գանձարանի, որոշել է մի որբեգիր պահել ծխական դպրոցներից մէկում։

—

Գանձակի հոգևորականութիւնը յանձնել է յաջորդ Կորիւն վարդապետին լինել ներկայացուցիչ։

—

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը յարգելով Արիստակէս Սեղրակեանի անմահ յիշատակը և նրա ունեցած երախտիքը ընկերութեան վրա, պսակի փոխարէն յատկացնում է յօգուտ հայ ուսանողների 50 րուբլի, յանձնելով այդ գումարը նպաստամատոյց յանձնաժողովին։

—

Ստաւրոպօլի հայ հասարակութիւնը պսակի փոխարէն յատկացնում է 50 րուբլի ի նպաստ ուսանողների։

—

Մենք ստացանք 74 րուբլի գումար, որ ժողվել են Արիստակէս Սեղրակեանի յիշատակին Արշակ Դոնդաղասպեան և Մկրտիչ Բաբաջանեանց Թիֆլիսի վաճառականների մի շրջանում։ Պսակի համար ժողված այդ գումարը նուիրատուների ցանկութեամբ յատկացվում է մեր երկրի աղէտեալների օգտին։

—

Ղարասու-բազարի (Ղրիմ) հայ հասարակութիւնը յանձնարարել է հեռագրով Յ. Սպենդիարեանին լինել նրա ներկայացուցիչը Արիստակէս արքեպ. Սեղրակեանի թաղման հանդէսին և դնել հանգուցեալի դագաղի վրա պսակ հասարակութեան կողմից։

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Ես ճանաչում եմ Արիստակէս Սեղրակեանին վաղուց, 1876—78 թւից ի վեր։ Առաջին անգամ տեսայ նրան Շուշում, երբ նա եկել էր իբրև թեմի առաջնորդական փոխանորդ։ Ապա նրան տեսայ Թիֆլիսում, երբ վարում էր թեմի առաջնորդութիւնը. աւելի մօտիկ ծանօթացայ, ճանաչեցի նրան և մտերմացայ էջմիածնում 1884, 1885 և 1892 թ. կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, իսկ մեր միասին ճանապարհորդութիւնը Թիֆլիսից Երուսաղէմ, երբ գնում էինք հրաւիրելու ներկայ կաթողիկոսին, հնարաւորութիւն տուեց ինձ խորապէս համոզվելու, թէ, արդարև, հայ եկեղեցական դասի մէջ նա մի անզուգական գործիչ էր, որի նմանը գուցէ դեռ երկար և երկար տարիներ չունենանք։

Իբրև ուժեղ, աննկուն կամքի, իբրև ժայռի պէս անսասան որոշ համոզմունքների տէր մարդ, նա ունէր և սաստիկ երկրպագուներ և սաստիկ հակառակորդներ։ Այդ հակառակորդները կարողացել էին խորին նախապաշարմունքներ առաջ բերել նրա դէմ շատ տեղերում, թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց այնքան մեծ էր նրա բարոյական դէմքի վեհութիւնը, այնքան աչքի էր ընկնում նրա բարոյական հեղինակութիւնը ամեն անգամ, երբ մէկը շփվում էր նրա հետ, որ այդ նախապաշարմունքները յօդս էին ցնդում իսկոյն և մէջ տեղ մնում էր պատկառելի, անկաշառ, համոզված և շիտակ, մաքուր, գաղափարական, եկեղեցական-ժողովրդական գործչի փայլուն դէմքը։

Ես կը բերեմ իմ յիշողութիւններից մի երկու դէպք։

II

1884—85 թ. կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ կղերական կուսակցութիւնը, որի պարագլուխն էր Սուքիաս եպիսկոպոսը, կամենում էր անպատճառ անցկացնել Մակարին կաթողիկոս։ Աշխարհական պատգամաւորները ամեն ջանք գործ դրեցին ընտրել Ներսէս պատրիարք Վարժապետեանին. երբ այդ չաջողվեց, յաջորդ 1885 թ. նրանք ստիպվեցին իրանց քուէն տալ Մուրադեանին, որպէս զի Մակարը չանցնէ, բայց հոգևորականները սաստիկ դիմադրութիւն ցոյց տուին և ընտրեցին Մակարին։ Այն սակաւաթիւ հոգևորականների թւում, որոնք համերաշխ ընթացին մեզ, ժողովրդական ներկայացուցիչներիս հետ, մեծ դեր էր խաղում Սեղրակեանը, որ հակառակ էր Մակարին ոչ որ և է անձնական թշնամութեամբ, այլ որովհետև յանձին նրա կղերական ոգին և կուսակցութիւնը պէտք է զօրեղանար հայոց եկեղեցու մէջ։

Յաջորդ կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, 1892 թ., ինչպէս յայտնի է ռուսահայոց ընտրելիներն էին Խրիմեան և Սեղրակեան։ Թիւրքահայերը ոչ Խրիմեանին էին ուզում, ոչ Սեղրակեանին։ Եւ թիւրքահայ պատգամաւորները, թէ աշխարհական և թէ հոգևորական, երբ եկան էջմիածին, ծանօթացան Մայր Աթոռի վիճակի հետ, ծանօթացան այն նոր ուղղութեան, այն բարեկարգութիւնների հետ, որոնց ոգին Սեղրակեանն էր և կատարողը, նախաձեռնողը Երեմիա եպիսկոպոսը, երբ շփվեցին Սեղրակեանի հետ, մեզ ասում էին աշխարհականները. «երբ այսպիսի եկեղեցական ունէք ձեր մէջ, ինչ հարկ կայ մեր մէջ որոնելու կաթողիկոսացու». իսկ հոգևորականները ասում էին. «կը տեսնենք որ անարդար են եղել մեր նախապաշարմունքները Սեղրակեան սրբազանի մասին. ահա ձեր և մեր ապագայ կաթողիկոսը, ապագայ, քանզի դեռ երիտասարդ է»։

Այսօր, ես շատ լաւ ըմբռնում եմ թիւրքահայ աշխարհական պատգամաւորների, մանաւանդ Կիւլէսէրեանի զարմանքը. «Զուր էք դուք որոնում կաթողիկոսացու մեր մէջ, քանի որ ունէք Սեղրակեան ձեր մէջ. կը վախնամ փոշմանէք»։

Մարգարէական ոգով էր խօսում Կիւլէսէրեան. գուցէ հայոց եկեղեցին ազատված լինէր այսօր իր փորձանքներից և կրած աղէտներից, եթէ մենք, պատգամաւորներս, այն ժամանակ աւելի սառնասրտութեամբ դատել և գործել կարողանայինք։

Բայց Սեղրակեան ինքն իր կանդիդատութեան մասին խօսել անգամ չէր կամենում։ Մի երեկոյ երբ Արծրունին, Մէլիք-Աղաբեանցը, Ն. Աթաբէկեանը և ես հաւաքված էինք տեղապահ Երեմիա եպիսկոպոսի մօտ, կաթողիկոսական երկրորդ կանդիդատի մասին վերջնական որոշումն կայացնելու համար, երբ մենք ամենքս պնդում էինք, որ երկրորդ կանդիդատը Արիստակէսը պէտք է լինի, իսկ Երեմիան պնդում էր, որ հէնց առաջին կանդիդատը Արիստակէսը պէտք է լինի, վերջինս ասաց.

—Սրբազան, եթէ մենք կամենում ենք, որ, վերջապէս, հայոց եկեղեցու մէջ մտցնենք մեր ծրագրած վերանորոգութիւնները, պէտք է ընտրենք կաթողիկոս մի անձն, որ իր մէջ ամփոփելիս լինի ամբողջ հայ ժողովրդի վստահութիւնը և քուէն, իսկ այդ անձն՝ միակ Խրիմեանն է։ Իմ կողմից մեծ յանցանք կը լինի տեսնել իմ մէջ այդ անձին։

—Արիստակէս սրբազան, ասաց տեղապահ Երեմիա եպիսկոպոսը, քո գլխաւոր պակասութիւնը այն է, որ մարդ ճանաչել չը գիտես. ես պարզ մարդ եմ և ուսումն չունեմ, բայց ես գիտեմ ճանաչել մարդկանց։ Խրիմեանը իմ օծակիցն է. նա դերվիշ հոգևորական է, բայց ոչ քո իմացած վարչական անձն, որ կարող լինի գլուխ բերել քո ծրագրած վերանորոգութիւնները։

Բայց Սեղրակեանը մնաց անդրդուելի, այնքան մեծ էր նրա հաւատը։

Մեղաւոր էր նա, որ այդ հաւատը չիրականացաւ...

III

Երբ մենք Պօլիս հասանք, ընդհանուր հետաքրքրութիւնը Արիստակէսի շուրջն էր պտտում։ Նրա մասին տարածված չարամիտ զրպարտութիւնները մեծ ճարակ էին գտել։ Չը նայելով որ այդ ժամանակ Ռուսաստանից եկած պատուիրակների հետ տեսակցվելը շատ մեծ անախորժութիւններ կարող էր առաջ բերել ամեն տեղ վխտացող լրտեսների պատճառով, բայց դարձեալ բազմաթիւ հոգևորականներ և աշխարհականներ աշխատում էին տեսակցվել Արիստակէսի հետ։ Եւ այդ անմիջական շփումը դարձեալ ունեցաւ այն հետևանքը, որ 10 օրվայ մէջ նոյն իսկ նրա ոխերիմ հակառակորդները ստիպվեցան զէնքը վար դնել, և «Բիւզանդիոնի» խմբագրապետ Քէչեան, նա, որ ամեն տեսակ զրպարտութիւնների, ինսինուացիաների տեղ էր տուել իր թերթում, անձամբ եկաւ Երուսաղէմատուն «մատուցանելու իր խորին յարգանքը ռուսահայոց մեծագոյն եկեղեցականին և գործչին»։

Մատթէոս Իզմիրլեանը ուղղակի ասաց. «Սրբազան, մեր ամբողջ յոյսը ձեր վրա է»։

Երուսաղէմում, Յարութիւն պատրիարքը նոյնը կրկնեց, երբ մենք հրաժեշտի ողջոյնը տալով, մեկնում էինք.

—Արիստակէս սրբազան, հայոց եկեղեցու յոյսը ձեր վրա է. դուք պէտք է արդարացնէք այդ յոյսը. միայնակ Հայրիկը ոչինչ անել չէ կարող։ Մենք ձեզ ենք յանձնում նրան։

IV

Բայց այդ յոյսերը զուր անցան։

Սեղրակեան գնաց Երուսաղէմ գեղածիծաղ յոյսերով, մեծ ծրագիրներով, լի հաւատով և ակնկալութիւններով, բայց վերադարձաւ խորտակված, ջախջախված, հիասթափված։

Եւ նա լաւ տեսաւ, որ հնարաւորութիւն չունի արդարացնել իր վրա դրած յոյսերը. նա աշխատեց մոռանալ իր վշտերը, պարփակած յոյսերը գրական աշխատութիւնների և առաջնորդական զբաղմունքների մէջ մի հեռաւոր անկիւնում, մի հեռաւոր թեմում։

Նրան չը վիճակվեց տեսնել իր երազած ռէֆօրմների իրագործումը։

Նա գերեզման իջաւ բոլորովին յուսահատ։ Կը յարուցանէ՞ մեզ Աստուած մի նոր Սեղրակեան։

Մարգարէ լինել չեմ կարող։

Այս գիտեմ, որ այսօր, թաղելով Սեղրակեանին, մենք թաղում ենք շատ և շատ յոյսեր, և հայոց եկեղեցին թաղում է նրա հետ գուցէ իր վերջին ակնկալութիւնը...

Հ. Առաքելեան

ԳԾԵՐ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊ. ՍԵՂՐԱԿԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

I

1891 թւականն էր։

Անմիջապէս կաթողիկոսական ընտրութիւնից յետոյ, Երեմիա արքեպիսկոպոսի տեղապահութեան ժամանակ, հոգևոր սինօդում քննվում էր մի յայտնի ապահարզանի գործ։

Ապահարզան խնդրողը բաւականին ազդեցիկ ու Սեղրակեանի հետ շատ մտերիմ անձնաւորութիւն էր, և այդ գործի պատճառով անձամբ էջմիածին գնալով միշտ լինում էր նրա մօտ։

Ի նկատի առնելով Սեղրակեանի ազդեցութիւնը, ընդհանուր կարծիք էր տիրում, որ գործը խնդրողի համար աջող ելք կունենայ շնորհիւ այդ մտերմական կապերի։

Սակայն այդ կարծիքը չարդարացաւ, և ահա թէ ինչպէս։

Սինօդի ատենադպիրը, նոյնպէս «այդ բարեկամական կապերի» շարժառիթներով ղեկավարվելով, Սեղրակեանի և խնդրատուի մտերմութիւնը աչքի առաջ ունենալով, գործի զեկուցումը պատրաստել էր այս վերջինիս համար միանգամայն նպաստաւոր կերպով։

Արիստակէս եպիսկոպոսը նկատելով զեկուցման միակողմանիութիւնը պահանջեց ատենանից այդ գործը, կազմեց բոլորովին նոր զեկուցում համապատասխան գործի իսկական դրութեան և յաջորդ օրը իր պատճառաբանված կարծիքի հետ միասին յանձնեց ատենադպրին զեկուցանելու։

Այդ ժամանակ սինօդի կազմը բաղկացած էր 5 անդամից, որոնցից երկուսը (Սարգիս Տէր-Գասպարեան և Արիստ. Դաւթեան եպիսկոպոսները) սովորաբար «միամ ի կարծիս» էին ստորագրում արձանագրութեան վրա, միշտ ձեռնպահ մնալով ամուսնական խնդիրներում։ Մնում էին երեք անդամ՝ Երեմիա արքեպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս և Վահան վարդ. Տէր-Գրիգորեան։

Օրէնքի համաձայն, նախ կարծիք պէտք է յայտնէին առանձին փոքրագոյն անդամները (ճնշումներից ազատ մնալու համար)։ Վահան վարդապետը, ինչ-ինչ շարժառիթներից դրդված, հաւանականօրէն, ի նկատի առնելով խնդրատուի մտերմական յարաբերութիւնները թէ Երեմիայի և թէ Արիստակէսի հետ, համաձայնութիւն տուեց ամուսնալուծմանը. նոյնպէս վարվեց և Երեմիա արքեպիսկոպոսը։

Սակայն մեծ եղաւ բոլորի զարմանքը, երբ պարզվեց, որ Սեղրակեանը իր «ունիմ զկարծիս»-ով տուած պատճառաբանված բացատրութեան մէջ անխնայ կերպով մերժում էր խնդիրը, չուզենալով եկեղեցական և պետական օրէնքներով սահմանված կարգերը խախտել իր բարեկամական շահերի համար, բացառութիւն անել. մանաւանդ որ այդ ամուսնալուծական գործում չը կային բաւականաչափ հիմունք, արդարացուցիչ հանգամանքներ, և այդ գործը դրական լուծումն ստացաւ նրա անդամութիւնից հրաժարվելուց յետոյ։

II

1892 թւականի հոկտեմբերի վերջերում մի քանի հոգու հետ միասին այցելութիւն տուինք Սեղրակեանին։

Կղերական «կամարիլլան» կարողացել էր արդէն նորէն կաթողիկոսի աչքում կասկածելի դարձնել նրա եռանդուն և անբիծ ծառայութիւնը, և նա այդ ժամանակ լքված ու մոռացված ապրում էր իր համեստ խուցի մէջ, հեռու վանական գործերի որ և է մասնակցութիւնից, և միակ մխիթարութիւնը որոնում էր մտաւոր աշխատութեան ու ծաղիկների խնամատարութեան մէջ, որոնց նա անչափ սիրում էր, և հազուագիւտ մտերիմների շրջանում։

Ընդունելութիւնը այնքան սիրալիր էր, նա այնքան հասարակ և ուրախ էր պահում իրան, որ ես միանգամայն զարմացած մնացի։ Որքան նա անմատչելի էր իր արտաքինով դրսում, նոյնքան մատչելի էր, սիրալիր և հիւրասէր իր յարկի տակ, ծանօթների շրջանում։

Խօսակցութիւնը անցաւ բաւականին աշխոյժ. նա պատմում էր իր ճանապարհորդական տպաւորութիւնները Երուսաղէմի, Հայրիկի, Պօլսի և տաճկական ստրկանների մասին, բայց գլխաւորապէս պտտվում էր օրվայ հրատապ հարցերի շուրջը, և այդ հարցերը դարձեալ էջմիածնի ժամանակակից դրութեանն էին վերաբերում, մանաւանդ կաթողիկոսի բռնած դիրքին, կղերական «կամարիլլայի» աճող ազդեցութեանը։

Նա, որ իրաւունք ունէր, իբրև մարդ, արտայայտելու իր դժգոհութիւնը, հիասթափութիւնը, վերջապէս իր զայրոյթը, միայն ցաւակցութիւն էր յայտնում իրերի դրութեան մասին։ Նա շեշտում էր, որ նորեկ, ռուսահայերի գործերին անծանօթ, կաթողիկոսին մոլորեցնում են շրջապատողները, օգտվում են նրա դիւրահաւատ բնաւորութիւնից և ի չարը գործադրում նրա բարեսրտութիւնը։

Եւ նա այդ ասում էր խորապէս համոզված, ցաւոտ զգացմունքով, արտայայտում էր միանգամայն անկեղծ, առանց դիտաւորեալ, նախանձախնդիր կաթողիկոսական կոչման վեհութեանը։

Այսօր նրա թարմ աճիւնի առաջ թերթելով անցեալի այդ յիշողութիւնները՝ հանգուցեալի բնաւորութեան գծերի մէջ չէ կարելի չընդգծել նրա անաչառ, սիրալիր ու անքէնախնդիր բարեխառնութիւնները, որոնք թէ մեր առօրեայ կեանքի մէջ և թէ էջմիածնի մենաստանի խցերում հազուագիւտ երևոյթներ են հանդիսանում։

Լ. Դանիէլեան

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ՍԻՐՈՒՄ ԷԻ ՆՐԱՆ

—

Թոյլ տուէք ինձ էլ մի քանի խօսք ասել իմ անմոռանալի և չքնաղ հոգևոր հօր՝ Արիստակէս սրբազանի մասին։

Վշտիս ծանրութեան տակ ես այժմ անկարող եմ վերարտադրել բազմաթիւ յիշողութիւններս և պատմել նրա կեանքից բազմաթիւ գծեր, որոնք ցոյց կը տային, թէ ինչու իմ մէջ այնքան երկար ու ձիգ տարիներ յարգանքի, ուղղակի պաշտաման առարկայ էր դարձել այդ անզուգական եկեղեցականը։ Գուցէ մի օր ես կարողանամ այդ անել և իմ յիշողութիւններս գրի անցնել։ Առայժմ նրա վերջին օրերից մի քանի դէպք պատմեմ։

Լաւագոյն յատկութիւնը, ի թիւս ուրիշ բարոյական գծերի, նրա մէջ այն էր, որ վերին աստիճանի անշահասէր էր։ Ես այդ գիտեմ բազմաթիւ ապացոյցներով։ Մահից 10 օր առաջ, մտածելով որ գուցէ փողի պէտք ունի և իմանալով որ մօտ 3 ամիս ռոճիկ չէ ստացել Աստրախանի կոնսիստորիայից, ես խօսք ձգեցի և հարցրի. «Սրբազան, ինչպէս էիք ստանում ձեր ռոճիկը»։ «Ամսէ ամիս,—ասաց նա.—երբեմն ուշանում էր, երբ կոնսիստորիայում փող չէր լինում»։—«Թոյլ կը տաք, սրբազան, իմացնել Աստրախանի կոնսիստորիային»։—«Ոչ, ոչ,—պատասխանեց նա,—չը պէտք է նեղացնել կոնսիստորին, մեղք է, նա փող չունի»։

Մի օր խօսք եղաւ էջմիածնի անմխիթար դրութեան մասին, և ես յոյս էի յայտնում, թէ, «ահա, սրբազան, Աստուծով շուտով կառողջանաք, կը գնաք էջմիածին, ժողովուրդը ձեզ վրա շատ յոյսեր է դնում»։ Նա պատասխանեց. «Իմ միակ ցանկութիւնն այն է այժմ, որ մի քիչ առողջանամ, մի երկու տարի ապրեմ՝ գրաւոր աշխատութիւններս աւարտելու համար. ուրիշ ոչ մի բան չեմ ցանկանում»։

Մահվանից 3 ժամ առաջ նա ձեռքերը բարձրեց դէպի վերև և թոյլ ձայնով բացականչեց. «Տարէք ինձ, տարէք ինձ»։ Թիֆլիսի առաջնորդ Գարեգին սրբազանը, որ ներկայ էր, հարցրեց.

—Որտեղ տանենք ձեզ, սրբազան։

—Վերև, վերև տարէք։

Այդ եղաւ նրա վերջին խօսքը. նա մնաց անզգայ և հանգեաւ խաղաղութեամբ։

Գնաք բարև, սրբազան հայր իմ, դուք ցանկացաք վերև բարձրանալ և բարձրացաք անվերադառնալի և թողիք յաւիտեան անմխիթար շատերին, որոնց թւում և ձեր հաւատարիմ ու անձնուէր Սանդրօյին։

Ալէք. Ստեփանեան

ՍՐԲԱԶԱՆ ՍԵՂՐԱԿԵԱՆ

(Նամակ Նոր-Բայազէտից)

—

Հայկական աշխարհի հորիզոնի վրա մի փայլուն աստղ ևս խաւարեց...

Մեռաւ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրակեան, միակ ականաւոր մարդը հայ հոգևորականութեան շրջանում...

Հայ հասարակութիւնը, որ այնքան էլ հարուստ չէ խելացի, գաղափարական, արդարադատ և ճշմարիտ հոգևորականներով, յանձին Արիստակէս արքեպիսկոպոսի կորցրեց իր արժանաւոր, շիտակ-ժողովրդասէր, անաչառ բարձր հոգևորականին, որի տեղը անշուշտ դեռ երկար ժամանակ բաց կը մնայ։ Հայ ժողովուրդը, որ առանց այն էլ աւելի կարօտ է լաւագոյն, խնամատար հոգևորականների, գործունեայ և զարգացած եկեղեցականների, Արիստակէս սրբազանի մահվամբ զրկվեց մի փայլուն, մի անզուգական անձնաւորութիւնից, որի վերաբերմամբ անշուշտ շատ մեծ յոյս էր տածում հայ հասարակութեան բանիմաց մասը։

Հանգուցեալ Սեղրակեան մի հասարակ հոգևորական չէր, կամ մի սովորական եկեղեցական հոգևոր պաշտօնեայ, այլ նա մի ամբողջ յոյս էր հայ ազգի համար, պարծանք հայ ժողովրդի, մի մեծ մարդ, մի գլուխ հայ հոգևորականութեան համար... Նա մեր հոգևորականութեան աչքն էր, եկեղեցական գործերի ղեկավարը, արդարադատութեան մի հմուտ գործիչ, որ գիտէր կռուել խաւարի և տգիտութեան դէմ, որ գիտէր նաև միաւորել բաժան սրտերը, գրել մարդկային զգացմունքը, համակել բոլորին դէպի լաւը և դէպի բարին... Նա, վերջապէս, միակն էր մեր եկեղեցական տարեգրութեան մէջ, որը կարող էր ապագայում հանել հայ հոգևորականութիւնը իր ընկած դրութիւնից, կանգնեցնել մարդկային-բարոյական ուղիղ ճանապարհի վրա և առաջնորդել դէպի լոյս, դէպի ճշմարիտ պարտականութիւն...

Հանգուցեալ Սեղրակեան իր ընդունակութեամբ, իր բարոյագիտութեամբ, գրական աշխատանքով, վառ գործունէութեամբ և արդարադատ խղճով իր կեանքի ամբողջ ընթացքում պարզեց ազատութեան դրօշը և այդ իսկ պատճառով վայելում էր հայ հասարակութեան մեծամասնութեան, հայ քաղաքացու, հայ գիւղացու և հայ-մարդու սէրը և համակրանքը, փառքը և պատիւը... Եւ ահա այդ տեսակէտից այդ կորուստը շատ թանկագին է մեզ պէս որբացեալ, խաւարամիտ, անտէր և անօգնական մի հասարակութեան համար...

Խոնարհվում ենք «սրբազան Սեղրակեանի» դամբարանի առաջ, համբուրելով նրա ս. աճիւնը և յաւէրժ-յիշատակ պահպանելով նրա անունը մեր հոգու խորքում...։

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ՊԵՏՐՕՎՍԿԻՑ

—

Նոյեմբերի 15-ին

Այսօր Պետրօվսկի հայոց եկեղեցում, համաձայն Աստրախանի հայոց վիճակային կոնսիստորիայի կարգադրութեան, ճաշու պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգստեան մաղթանք Թեմական առաջնորդ Արխատակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մասնակցութեամբ:

Մխաւեր արժ. Արշէն քահանան մի առ մի թւելով հանգուցեալի գործունէութիւնները՝ կանգ առաւ նրա գործունէութիւններից ամենանշանաւորի, այն է Աստրախանի թեմական դպրոցի բացման վրա, որի համար արժուն առաջնորդը չխնայեց ոչ մի ջանք՝ չխնայելով իր ֆիզիքական քայքայված դրութեանը, սակայն և նա իրան մխիթարված համարելով՝ վերջին անգամ հրաժեշտ տուեց Աստրախանի վիճակին՝ օրհնելով նորաբաց սեմինարիան և նրա սաներին:

Եղ. Լալազարեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Կարսն էլ ունեցաւ իր ռէալական դպրոցը: Դեռ մի ամիս առաջ Կարսի փողոցների պատերին կպցրած էին յայտարարութիւններ. հասարակութիւնը ժպիտն երեսին մօտենում էր այդ յայտարարութիւններին և ուրախ զուարթ կարդում, որ վերջապէս Կարսն էլ արժանացաւ միջնակարգ դպրոց ունենալու բաղդին: Շատերի սիրտը ուրախութիւնից թրթռում էր. նրանք այլևս ստիպված չեն լինի իրանց սիրասուն զաւակներին ուսման տալու համար օտար քաղաքներ ուղարկել: Այժմ Կարսը յանձին իր նորաբաց ռէալական դպրոցի ներկայացնում է հասարակութեան որոշ տոկոսի համար ուսման մի փոքրիկ կենտրոն:

Ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացանք, Կարսում ռէալական դպրոց բանալու նախաձեռնութիւնը պատկանում է բացարձակ մեծամասնութիւն կազմող հայ ազգաբնակութեանը, որի վրա և բնականօրէն ծանրացած է տնտեսական կեանքի լծակը: Բայց այն միտքը, որ իրանց երեխաները Կարսում սովորելով կարող են միջնակարգ կրթութիւն ստանալ և միևնոյն ժամանակ տիրապետել նաև մայրենի լեզուին, ոգևորել է հայ հասարակութեանը կանգ չառնել նիւթական երկզիսի առաջ, ռէալական դպրոց ուղարկելու հարիւրաւոր մանուկներ. և ահա այդ է պատճառը մասամբ, որ ամեն կողմից խնդիրներ էին թափվում ռէալական տեսչի գլխին:

Սակայն նորաբաց ռէալական դպրոցի վարչութիւնը, ինչպէս երևում է, դեռ չէ ժառանգել գօլիցինեան յաւէտ անդառնալի ռէժիմը գործադրել նաև նորածին դպրոցի նորածին կեանքում: Նա իր վարմունքով ցոյց տուեց, որ յիրաւի երկրպագու է անիծեալ ռէժիմի բիրտ շահատակմանը, որով տեղական լեզուների իրաւական և իրական դրութիւնը, չը նայած վերջին տարիների ընթացքում աշակերտութեան, ինչպէս և գիտակից հայ հասարակութեան սուրբողական պահանջին, շատ խախուտ հիմքերի վրա է դրված:

Դժբաղդաբար նոյն վերաբերմունքը արտայայտվեց այսօր նաև մեր Կարսի ռէալական դպրոցի կեանքում հայոց լեզուի նկատմամբ: Այդ բազմաչարչար լեզուն այստեղ ևս արհամարվում է իբրև մի աւելորդ, մի անպէտք առարկայ, իբրև ուսուցման հակադրող մի գործօն, յանձնվելով մանկավարժական ասպարիզում ամենաապիկարին: Թէև սա ոչ նորութիւն է և ոչ էլ մի եզակի երևոյթ, բայց մենք կարսեցիքս երբէք չէինք ցանկանայ, որ մեր խղճուկ կօպէկներով պահվող դպրոցի գլխին գործադրվէր այդ բիրտ շահատակումը: Ընդհակառակը, մենք սպասում էինք, որ այդ դպրոցում հայկական լեզուն կը յանձնվի մի այնպիսի ուսուցչի, որ գոնէ հայկական միջնակարգ դպրոցի, դեռ չեմ ասում ճեմարանի, պատրաստութիւն ունենար հայոց լեզուից:

Բիւրօկրատիկ վարչութիւնը, որ միայն յանձնարարած նամակներով և կարծեցեալ հաւատարիմ հպատակութեան զգացումով է ղեկավարվում, առանց տատանվելու՝ հայ մատաղ սերնդի մայրենի լեզուի ուսուցման սրբազան գործը յանձնում է Յ. Թասլաչեանի նման մէկին, որ հայ լեզուի և կրօնի ուսուցումից այնքան է հասկանում, որքան հաւը լօգիկայից: Ի՞նչ նրա բանն է մանկավարժութիւն, մատաղ սերնդի կրթութիւն, դաստիարակութեան նուիրական գործ:

Կարսի գիտակից հասարակութիւնը, լսելով Թասլաչեանի ռէալական դպրոցում հայոց լեզուի ուսուցիչ նշանակվելը, յանկարծակիի եկաւ և ռէալական դպրոցի նկատմամբ իր յոյսերի մեծագոյն մասը խորտակված տեսաւ: Ահա թէ որտեղ է թաղնված ժողովրդի ուսումնարանից սառչելու գաղտնիքը:

Այս կորստաբեր հանգամանքի վրա հրաւիրում ենք թեմական առաջնորդի և վիճակիս յաջորդի լուրջ ուշադրութիւնը:

Ա. Հ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Նոյեմբերի 5-ին

Քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու Ախալքալաքի գաւառում ունեցած՝ Կարծախ, Սուլդա և Տաւեշ գիւղերի համայնքը խնդիրք է ներկայացրել Թիֆլիսի վիճակային կօնսիստօրիային և ս. Փրկիչ եկեղեցու հոգաբարձութեան, որ այդ գիւղերի հողերի շահագործութիւնը այսուհետև չը տրվի մասնաւոր կապալառուներին, որոնցից գիւղացիք ճնշվում են ու հարստահարվում, այլ տրվի իրանց՝ գիւղացիներին, ստանալով իրանցից նոյն կապալագումարը:

Գիւղացիների այդ համակրելի պահանջը քննելու և որոշումն կայացնելու համար՝ անհրաժեշտ է իմանալ ծխականների կարծիքն ու ստանալ նրանց համաձայնութիւնը: Ուստի ահա մի ամսից աւելի է, որ եկեղեցու հոգաբարձութիւնն ու երէցփոխն անընդհատ ժողովներ են նշանակում, սակայն, ամեն անգամ ծխականները չը հաւաքվելու պատճառով, ժողովը մնում է անկատար: Վերջին անգամվայ ժողովն էլ նշանակված էր այս կիրակի, ամսիս 5-ին, որի համար հոգաբարձութիւնը նախօրօք տպագրված թերթիկներով ու ծանուցումներով հրաւիրել է հասարակութեանը: Սակայն կրկին նոյն երևոյթը: Ժողովում 5—10 մարդուց աւել չէին գտնւել, ուստի ժողովը այս անգամ էլ չը կայացաւ: Այսպէս, չը նայելով որ նպատակը մի վսեմ ու կարևոր հարց է, այնուամենայնիւ, ժողովուրդը խուսափելով ժողովից, մինչև այսօր էլ մնացել է անլուծելի: Ինչու, ինչ պատճառով, չէ՞ որ նոյն ժողովուրդն էր, որ նախընթաց տարիներին, ամենաչնչին հարցի համար, 400—500-ն չափ հաւաքվում և իր որոշումներն էր անում: Իսկ հիմա ժողովի ժամանակ ինչպէս է որ եկեղեցու մօտից անգամ չէ ուզում անցնել: Հարցը պարզ է: Ժողովուրդը «մէկ անգամ կերաւ, բայց տասը կշտացաւ»: Նա այսօր, շնորհիւ մեր ժողովներում տիրող բռնութիւնների ու ոգեղ երևոյթների, այնպէս է զզուել ու կշտացել նորանցից, ինչպէս թուրքը խոզի մսից: Երբ հարցնում ես ամեն հանդիպողի—«ինչու չես գնում ժողովի».—«Թող, ի սէր Աստուծոյ, գործ չունիմ, խելքս չեմ կորուսէ, որ ժողովի գնամ անպատւիմ»: Ահա մեր ժողովրդի պատասխանը: Նա արդէն ճաշակել է նրա համը, անպատւել, նոյնիսկ ծեծվել, և գիտէ թէ, շնորհիւ մի խումբ մարդկանց, ինչ տեսակ ժողովներ են լինելու, ուստի իրան աւելի պատիւ է համարում բոլորովին խոյս տալ: Ուրեմն այլևս մեղադրել չէ կարելի ժողովրդեան, երբ ահա հինգերորդ անգամն է ժողով է նշանակում հոգաբարձութիւնը ապարդիւն: Sapienti sat.

Խ. Գ.

ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ

Լինում են զուգադիպութիւններ մարդկանց կեանքի և գործունէութեան զանազան բոպէների տարեթւերի մէջ:

Մեր առաջ դրված է մի զուգադիպութիւն:

Արխատակէս Սեդրակեանը հասաւ Թիֆլիս սեպտեմբերի 19-ին: Նա թաղվում է այսօր նոյեմբերի 19-ին:

Մի ամսից յետոյ, դեկտեմբերի 19-ին կը լինի Արխատակէսի բարեկամ Գ. Արծրունու մահվան տարեդարձը:

Արդեօք ուրիշ զուգադիպութիւններ էլ կան հանգուցեալի կեանքի զանազան շրջաններից:

Վ-ն

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԶԻՎԱՆՇԻՐԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Նոյեմբերի 24-ին

Զիվանշիրում այժմ գոյութիւն ունի տասը (10) գիւղական Ն. Ժ. Լ. ուսումնարան: Մինչև հայ-թուրքական ընդհարումների բռնկվելը դրանց թիւը 11 էր, սակայն դրանցից մէկը՝ Սարովի երկդասեան ուսումնարանը իր գոյութիւնը վերջացրեց՝ սարովեցիների ցրված օրից: Այժմեան տասը ուսումնարանները սրանք են. Բաղդու, Կուսապատի և Առաջաձորի երկդասեանները (Առաջաձորի երկդասեանը ժամանակաւոր դարձրած է Գանձակի նահանգի դիրեկցիայի կարգադրութեամբ միդասեան՝ այդ ուսումնարանի երկրորդ դասարանը պահելու համար միջոց չունենալու պատճառով) ու Թալիշի, Մարաղու, Մարգակերտի, Ջան-Եաթաղի, Ալփաութի, Հասան-Ռիզի (Հաթերք) ու Վանքի միդասեանները:—Բաղդու ուսումնարանները պահվում է ռեժամօֆ հաշւով (հողային հարկերից), Կուսապատի, Վանքի, Ալփաութի և նախկին Սարովի առաջին դասարանի (Սարովի ուսումնարանի երկրորդ դասարանը բացել էր Սարովի գիւղական հասարակութիւնը իր սեփական հաշւով՝ համաձայն վերջինների կազմած նախահաշւական թերթի) գոյութիւնը պահպանելու համար: Զիվանշիրի ազգաբնակութեան ամեն մի ծուխը տարեկան 70 կ. հարկ է տալիս պետական գանձարանին: Առաջաձորի վեց գիւղերից բաղկացած գիւղական հասարակութիւնը պէտք է տայ Առաջաձորի երկդասեանի գոյութիւնը պահպանելու համար տարեկան 700 ր., իսկ պետական գանձարանը տալիս է այդ ուսումնարանին նպաստ տարեկան 600 ր.: Հասան-Ռիզու գիւղական հասարակութիւնը *) իր միդասեան ուսումնարանի համար տարեկան պէտք է տայ պետական գանձարանին 200 ր., իսկ գանձարանը տալիս է նոյն ուսումնարանին տարեկան 400 բուբլի նպաստ, Ջան-Եաթաղի (մի քանի գիւղերից բաղկացած) և Մարգակերտի (մի գիւղից բաղկացած) գիւղական հասարակութիւնները իրանց միդասեան ուսումնարանների համար տարեկան պէտք է տան պետական գանձարանին 700 բուբլի՝ այդ հասարակութիւններից ամեն մէկը առանձին: Թալիշի գիւղական հասարակութիւնը պէտք է տայ միևնոյն գանձարանին տարեկան 600 բուբլի՝ իր միդասեան ուսումնարանի համար: Այդ գումարները, վերոյիշեալ հասարակութիւնները պէտք է տան որտեղ հարկն է՝ համաձայն իրանց ինքնայօժար կամքով կազմած ու հաստատված օրինաւոր նախահաշւական թերթի: Սակայն յիշեալ հասարակութիւնները մի քանի տարի շարունակ չեն տուել իրանց խոստացած ուսումնարանական տուրքը. չեն տուել՝ մասամբ աղքատութեան պատճառով, որ կառավարութիւնը շատ թոյլ է վերաբերվել այդ տուրքը հաւաքելու գործում և կամ կարելի է ասել, մեզ անյայտ պատճառով ամենևին չէ պահանջել և թէկուզ գիւղական հասարակութիւնները չեն տուել վերոյիշեալ ուսումնարանների տուրքը, այնուամենայնիւ պետական գանձարանը ուսումնարաններում ծառայողների ռոճիկները տուել է: Այս տարի Գանձակի նահանգի դիրեկցիան առաջարկեց գիւղական ուսուցիչներին, որ վերջինները միդասեան ուսումնարանների տուրքը հաւաքել տալ գանձարանը ուղարկել, թէ չէ իրանք՝ ուսուցիչները առանց ռոճիկի կը մնան, որովհետև գանձարանը միջոց չունի այլևս տալու առաջվայ նման այդպիսի ուսուցիչների ռոճիկները, թէկուզ գիւղական հասարակութիւնները իրանց ուսումնարանների տուրքը գանձարանին տուած էլ չը լինեն: Ուսուցիչները մինչև այս տարի ուսումնարանի հարկերը հաւաքելու հարցում չէին խառնված, միջամտած, ուստի այս անգամ էլ թէկուզ խնդրեցին հասարակութեանը՝ ուսումնարանի տուրքը հաւաքելու ու գանձարանը ղրկելու, այնուամենայնիւ ժողովուրդը՝ շնորհիւ անմիտ հայ-թուրքական ընդհարումների՝ չը կարողացաւ տալ գանձարանին այդ հարկը: Դիրեկցիան, տեսնելով, որ ուսուցիչները չեն կարողանում այդ փողերը ժողովել և ուղարկել գանձարանը, դիմեց պ. նահանգապետին, իսկ վերջինս գաւառապետներին: Գաւառապետներն էլ իրանց կողմից հրամայեցին պրիստաւներին, որոնք շրջաբերականով հրամայեցին գիւղական տանուտէրներին ու լռեցին: Պրիստաւների պաշտօնական թղթերը տանուտէրները դրեցին «խալիչաների» տակ ու իրանք էլ լռեցին: Իսկ ուրիշ հարկերի համար պրիստաւը ստրաժնիկներով գալիս է գիւղերը ու մինչև ժողովրդից չէ ստանում տուրքերը, չէ հեռանում գիւղից... Գիւղական հասարակութիւնները ու տանուտէրները չը վճարելով ուսումնարանների հարկերը լռում են, առանց որևէ յայտարարութեան ում որ հարկաւոր է..: Եւ չնայած որ հասարակութիւնները դեռ չեն տուել ուսումնարանների հարկերը, այնուամենայնիւ նրանց ուսումնարանները գոյութիւն ունեն այժմս. նրանցում շարունակվում է դասատւութիւնը և այդ ուսումնարանների ուսուցիչները ստանում են գանձարանից ռոճիկ: Եթէ գանձարանը պահանջէ հասարակութիւններից ապառիկ մնացած ուսումնարանների հարկերը, ապա ինչպէս պէտք է վճարէ աղքատ, քայքայված ժողովուրդը այդ մեծ գումարները միանգամից: Կայ հասարակութիւն, որը չէ վճարել 4—5—6—7 տարիներ և պահանջված դէպքում պէտք է վճարէ միայն 600 ր.×7, 700×4 700×5, 700×6 և այլն: Շատ սխալվել են գիւղական հասարակութիւնները, որ իրանց բեռները այդքան ծանրացրել են, սակայն պէտք է այդ դէպքում մեղադրել վարչութեանը, որ ամեն տարի չէ աշխատել ուրիշ հարկերի հետ ժողովել և այդ հարկերը, իսկ ապա գիւղական հասարակութիւնները, օգտվելով հանգամանքից և կարծելով թէ այդ փողերը իրանց է բաշխվելու, ուսումնարանները պահվել են պետական գանձարանի հաշւով:

Եթէ կառավարութիւնը միջոցներ ձեռք չառնի գիւղական Ն. Ժ. Լ. ուսումնարանների վիճակը բարւոքելու, պէտք է ասել, որ ապագայում այդպիսի ուսումնարանների վիճակը լաւ չէ լինելու: Հէնց միևնոյն դրութեան մէջ են և ուրիշ գաւառների (Գան. նահ.) վարչական, գիւղական ուսումնարանները: Ժամանակ է չը լռել... այլ մտածել և այդ մասին...:

Բ. Զ.

---

*) Մի քանի գիւղերից բաղկացած, որոնցից մի քանի թուրքբնակները աւերված են:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

I

Ահա մի քանի ամիս է, ինչ զանազան անձնական, ստոր հաշիւներից գրդված, անբարեխիղճ մարդիկ սկսել են դաւեր, ինտրիգներ լարել մեր ամենիս սիրած ու փայփայած, միակ միջնակարգ առևտրական դպրոցի դէմ: Պրոպագանդա՝ հասարակութեան մէջ, ստութիւններով ու զրպարտութիւններով լի յօդուածներ՝ լրագիրների մէջ. այս ամենը տենդային արագութեամբ և մեծ եռանդով կատարվում է կարծես մի դժոխային կազմակերպութեան կողմից, նպատակ ունենալով, ինչ գնով, ինչ միջոցով էլ կուզէ լինի, քանդել ալէքսանդրապոլցիներիս համար այդ ամենաթանգագին հիմնարկութիւնը—30 տարւայ մեր ձգտումների իրականացումը: Օտարը այդ չի հասկանայ, նրա համար միևնոյն է, նա ոչինչ չի կորցնի առևտրական դպրոցի փակվելուց: Բայց մենք՝ ալէքսանդրապոլցիներս, որ զգում ենք այդ հիմնարկութեան անհրաժեշտութիւնը այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է օդը՝ մարդու և ջուրը ձկան համար, ամեն կերպ կաշխատենք պաշտպանել և անվտանգ պահել նրան այդ ստոր մարդկանց լարած ինտրիգներից և յարձակումներից:

Ես դէմ եմ այն մարդկանց կարծիքներին, որոնք պնդում են, որ չարժէ ուշադրութիւն դարձնել այդ երևոյթի վրա, որ չարժէ պատասխանել լրագրական՝ ստութիւններով լի յօդուածներին: Ոչ, պարոններ, պէտք է պատասխանել, որպէսզի ամեն մի ընթերցող տեսնէ այդ անբարեխիղճ մարդկանց իսկական պատկերը:

«Երկիր» լրագրի № 29-ում տպված է մի յօդուած «Իրաւացի բողոք» վերնագրով, «Ծնող» ստորագրութեամբ: Այդ յօդուածում պ. Ծնողը քաղ. ձայնաւորների ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ առևտրական դպրոցում տեղի ունի մի չը տեսնված ու չը լսված զեղծում. այսինքն, որ բժիշկ Տէր-Իսահակեանը աւանդում է աշխարհագրութեան և բնական գիտութեան դասեր: Երկրորդ չը տեսնված ու չը լսված զեղծումն այն է, որ այդ պ. Տէր-Իսահակեանը, (որի պատճառով վաղուց է, ինչ պ. Ծնողը իր քունը կորցրել է) ստանձնելով 15 բնական գիտութեան և 4 աշխարհագրութեան դասեր և 2 դաս էլ օր. գիմնազիայում, յանդգնել է ստանձնել նաև այդ դպրոցներում, քաղաքային դպրոցում դպրոցական բժշկի պարտաւորութիւնը և «ասում են», որ նա (զարմանալի է, որ այդ ասողները ամբողջ քաղաքում միայն պ. Ծնողին են ասել)—բժ. Տէր-Իսահակեանը «պարտաւորվել է խնամել մի մասնաւոր պանսիոնի աշակերտների, ի հարկէ վարձով»:

Ահա այսպիսի սոսկալի զեղծումներ են կատարվում լոյս աշխարհում և ոգէտ ալէքսանդրապոլցիք և քաղ. ձայնաւորները քնել են և ոչ մի միջոցի չեն դիմում:

Այդ յօդուածը կարդացի և շտապեցի ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել այդ ուսուցչի մասին, առաջին իսկ աղբիւրներից: Իբրև նոյնպիսի մի ծնող՝ ինչպիսին «Երկրի» յօդուածագիր ծնողն է, ես մտայ դպրոց պ. դիրեկտօրի մօտ և ինձ հետաքրքրող խնդրի մասին մի քանի հարցեր տուի, որոնց պ. Ռօմանովսկին (դիրեկտօրը) շատ սիրալիր կերպով պատասխանեց:

Հարցնում եմ—Ձեր դպրոցի բժիշկը քանի՞ ժամ (շաբաթական) պարտաւոր է յաճախել դպրոց և արդեօք այդ պարտաւորված ժամերին նա լինում է դպրոցում և հսկում է արդեօք բոլորին:

Պ. Ռօմանովսկին պատասխանում է. «Անցեալ տարի, երբ նա լոկ դպրոցական բժիշկ էր, պայմանի համաձայն պարտաւոր էր դպրոցում լինել ամեն օր միայն մեծ դասամիջոցներին (որ տևում է 20 ր.) և նա կանոնաւոր կերպով յաճախում էր ամեն օր և նայում էր աշակերտներին: Իսկ այս տարի երբ նրան դասեր տուինք, նա ամենայն օր փոխանակ միայն մեծ դասամիջոցին (20 րօպէ), բացի առաջին և երկրորդ դասերից միշտ, մինչև դասերի վերջը լինում է դպրոցում և աշակերտները փոխանակ մի դասամիջոցին բժշկով օգտվելու՝ օգտվում են ամբողջ օրը մինչև դասերի վերջը (3-4 ժամ)»:

Այդ ասելուց յետոյ պ. Ռօմանովսկին մի քանի դէպքեր պատմեց, որոնք պերճախօս կերպով ապացուցանում էին, թէ որքան օգտակար է, երբ բժիշկը միշտ դպրոցում է լինում:

—Բայց ես կուզէի իմանալ, ասացի ես, թէ որքան յարմար էր նրան դասեր տալը, մանաւանդ աշխարհագրութեան դասեր. գուցէ դուք գրաւվելով այն գաղափարով, թէ այդպիսով բժշկին միշտ դպրոցում կը պահէք, դասերը և աշակերտների մտաւոր առաջադիմութիւնը զոհել էք յիշեալ գաղափարին:

—Նախ քան նրան բնակ. գիտութ. դասեր առաջարկելը, ես այդ մասին տեղեկութիւն պահանջեցի և ստացայ Խարկովի համալսարանի վարչութիւնից, որտեղ նա սովորել է: Այդ տեղեկութիւնները այնքան վստահելի էին, որ ես առանց տատանվելու յանձնեցի նրան բնական գիտութիւնների դասերը և այժմ ես ոչ միայն չեմ զղջացել, այլև չափազանց գոհ եմ այդ կարգադրութիւնիցս, որովհետև պ. Տէր-Իսահակեանը այնքան լաւ է դրել իր դասերը և կարողացել է այնքան հետաքրքիր դարձնել, որ աշակերտները սիրով և մի առանձին հետաքրքրութեամբ են պարապում նրա հետ: Եղել են դէպքեր, երբ աշակերտները այնքան հիացած են եղել նրա դասերով, որ ծափահարութիւններով են դուրս բերել նրան դասարանից: Իսկ իմ և ինսպեկտօրի—պ. Իւանովի (բն.) դուրս բերած կարծիքը պ. Տէր-Իսահակեանի մասին որպէս ուսուցչի, նրա դասերին մի քանի անգամ, ինքնաքննիչորս լինելուց յետոյ, այն է—որ նա շատ բարեխիղճ ուսուցիչ է և ամենաջերմ դասատւող:

—Զարմանալի է որ նա դասեր բաց թողած լինի, հարցրի ես:

—Ոչ միայն դասեր բաց չէ թողել, այլ իր դասերից ոչ մի անգամ չի էլ ուշացել և մինչև այսօր կանոնաւոր կերպով յաճախել է դպրոց իր ժամանակին:

—Իսկ աշխարհագրութեան դասերի մասին ինչ կասէք, հարցրի ես:

—Նրան տուած է աշխարհագրութեան դասեր միայն այն դասարանի, ուր անցնում են ֆիզիքական աշխարհագրութիւն այնպիսի ծրագրով, որ շատ մօտ է նոյն դասարանի բնական գիտութեան դասերի ծրագրին:

Շնորհակալութիւն յայտնելով պ. Ռօմանովսկուն, դուրս եկայ նրա մօտից և գնացի գիմնազիա: Ներկայացայ վերատեսչուհուն և համարեա նոյն հարցերն էլ նրան տուի, և բանից դուրս եկաւ, որ պ. Տէր-Իսահակեանը գիմնազիայում ունի միայն 2 դաս, իսկ մնացած 2 դասը, և երբ թէ նա մասնաւոր պանսիոնի բժիշկ է, նաև ս. Փրկչի դպրոցում ունեցած նրա 2 դասը, դրանք բոլորն էլ պ. Ծնողի երևակայութեան արդիւնք են, և ապացուցանում են, որ պարոնը կրքից այնքան կուրացած է, որ չէ քաշվում հրապարակաւ, աչքաբաց խօսել:

Վերատեսչուհին—օր. Օլ. Անդրէասեանը վկայեց, որ պ. Տէր-Իսահակեանը իր դպրոցում ունի 2 դաս, ոչ մի օր նա իր դասերը բաց չէ թողել, նոյնիսկ դասից չէ ուշացել: Կարողացել է իր դասերը շատ հետաքրքիր դարձնել աշակերտուհիների համար:—«Այնպէս որ՝ երբ մի ամիս առաջ շրջանային վերատեսուչը—Լաբիանովը եկել էր մեզ մօտ, պ. Տէր-Իսահակեանի դասերին լինելուց յետոյ, ինձ ասաց, որ պարոնը «տաղանդաւոր» դասատւող է»:

«Իբրև դպրոցական բժիշկ,—աւելացրեց նա,—պարտաւոր է յաճախել դպրոց շաբաթական երեք անգամ, բայց այժմ նա մեզ մօտ լինում է իբրև բժիշկ շաբաթվայ բոլոր օրերին, բոլոր առաջին դասերին, որոնցից 3 օր այս շինութեան մէջ, 3 օր էլ մեր միւս շինութեան մէջ. այնպէս որ այդ կողմից էլ մենք փոխանակ շնորհակալութեան ոչ մի առիթ չունինք նրանից դժգոհ լինելու»:

Բանից դուրս եկաւ, որ պ. Տէր-Իսահակեանը շաբաթվայ ընթացքում ոչ մի երկրորդ դաս չունի, ուրեմն 6 ժամ ազատ է և ահա այդ 6 ժամից 2-ին նա, որպէս բժիշկ, գնում է քաղաքային դպրոցը: Ահա այն ամենը, ինչ որ ես կարողացայ լսել առաջին իսկ աղբիւրից պ. Տէր-Իսահակեանի մասին և՛ որպէս ուսուցչի, և՛ որպէս դպրոցական բժշկի:

Ինչպէս տեսնում ենք, նա ոչ միայն ժամանակ ունի իր վերցրած պարտականութիւնը ճշտութեամբ կատարելու, այլև նա ունի և մի քանի ազատ ժամեր, որոնք նա նոյնպէս նուիրում է այդ դպրոցներին: Ներողութիւն կրեք, պ. Ծնող, մտնելու գիմնազիա, այնտեղ ձեզ կը հաղորդեն, թէ պ. Տէր-Իսահակեանը անցեալ տարվայ ընթացքում քանի՛ ձրի դասեր է պարապել այնտեղ, բացի իր ունեցած դասերը: Ինչ կը վերաբերի աշխարհագրութեան դասերին, եթէ բարեխիղճ մարդ լինէր պ. Ծնողը և մի քիչ ներողութիւն կրէր, հետաքրքրվէր, նա կիմանար, որ վերջերս արդէն մանկավարժական ասպարիզում ցանկալի է համարվում, միջնակարգ դպրոցների առաջին դասարաններում, բնական գիտութեան ուսուցչին յանձնել և այդ դասարանի աշխարհագրութեան դասերը: Որովհետև, ինչպէս վերևում էլ ասացինք այդ երկու առարկաները այդ դասարանում շատ սերտ կապ ունենն իրար հետ և այդ դասարանի աշխարհագրութեան դասը աւելի յարմար է համարվում տալ բնական գիտութիւն աւանդող ուսուցչին: Եթէ ներողութիւն կրէ պ. Ծնողը, դժուար չի լինի նրան համոզվել, որ Կովկասի շատ միջնակարգ դպրոցներում այդպէս են բաժանված դասերը: Այդ հարցը այնքան հասունացած է համարվում, որ այժմ արդէն սկսել են դասագրքերի գրականութեան մէջ երևալ այդ դասարանների համար աշխարհագրութեան և բնական գիտութեան միացած (մի գրքի մէջ) դասագրքեր, որի մէջ (այդ մի գրքի մէջ) տեղաւորված են առաջին դասարանի թէ բնական գիտութեան և թէ աշխարհագրութեան կուրսը: Միջնակարգ դպրոցներում ընդունված ծրագրերի համաձայն՝ առաջին դասարանի ուսուցչից պահանջվում է, որ նա 10-11 տարեկան տղաներին համառօտ տեղեկութիւններ տայ մաթեմատիքական աշխարհագրութիւնից (մոլորակների, արեգակնային համակարգութեան, երկրի շարժողութեան, երկրագնդի գօտիների մասին և այլն), նոյնպէս այն մասին, թէ ինչպէս են առաջ գալիս քամիները և շատ ուրիշ մթնոլորտային երևոյթներ: Հասկանալի է, որ առանց նախապէս համառօտ տեղեկութիւններ հաղորդելու տղաներին ձգողական ուժի, էներգիայի, կենտրոնախոյս ուժի, նոյնպէս և մագնիսականութեան, էլէքտրականութեան մասին և այլն, անհնարին է նրանց պարզ բացատրել այն բոլոր երևոյթները, որոնց մասին նրանք տեղեկութիւն պէտք է ունենան համաձայն վերոյիշեալ ծրագրի:

Սրանից հետևում է, որ ցանկալի է այդ երկու առարկաները — աշխարհագրութիւնը և բնական գիտութիւնը, առաջին դասարանում աւանդէր մի ուսուցիչ, որպէսզի զուգընթացաբար, աւելի սիստեմատիկ և հետևապէս աւելի հիմնովին կարողանայ անցնել 10—11 տարեկան մանուկների հետ այդ առարկաները: Այդ հիման վրա էլ դպրոցական բարձրագոյն վարչութիւնը առանձին շրջաբերականով կարգադրութիւն է արել, որ այդ երկու առարկաները մի ուսուցչի յանձնվեն:

Եզրափակենք բոլոր մեր ասածները:

Ինչպէս պաշտօնական տեղեկութիւնները (իմ հաւաքած), որոնք հրատարակելու մասին լիազօրութիւն ստացել եմ թէ առևտրական դպրոցի և թէ գիմնազիայի վարչութիւնից, նոյնպէս և առևտրական դպրոցի բարձր դասարանների աշակերտների յայտնած գոհունակութիւնը, քաղ. ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ, գալիս են ապացուցանելու, որ պ. Ն. Տէր-Իսահակեանը թէ որպէս ուսուցիչ և թէ որպէս դպրոցական բժիշկ շատ բարեխիղճ է եղել մինչև օրս և յուսով ենք այդպէս էլ կը շարունակէ, առանց ուշադրութիւն դարձնելու այդպիսի ստոր զրպարտութիւնների վրա, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ամեն մի ընթերցող շատ լաւ է հասկանում «Ծնող» ստորագրութեան տակ թաքնված պարոնների իսկական, բուն նպատակը, որը ինչքան էլ կուզէ թաքնվի, ինչ մուշտակ էլ հագնելու լինի, այնուամենայնիւ նրա սև պատկերը փայլում է նրա յօդուածի իւրաքանչիւր տառի արանքից:

Ն. Գնունի

Ալէքսանդրապօլ, նոյեմբերի 12-ին

ԿՈՉ Ն.-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Քանիցս արդէն «Մշակում» գրվում և պատճառաբանվում է, որ Քիշնևի կօնսիստօրիան անհրաժեշտ է և ժամանակ է արդէն տեղափոխել Ն.-Նախիջևան. այո, անհրաժեշտ է, խօսք չը կայ. բայց ո՞վ պէտք է գործի ձեռնարկի և ո՞ւմ դիմել: Յամենայն դէպս—ո՛չ առաջնորդին. նրան մի՞թէ ձեռնտու է Ն.-Նախիջևանի պէս համեմատաբար աղմկալից քաղաքում պաշտօնավարելը, ուր կայ այսօր քիչ-շատ դիւրաբորբոք տարր յանձին երիտասարդութեան, որ կարող է կօնտրօլի դեր խաղալ... Ուրեմն փոխանակ դիմելու առաջնորդին, որի շահերի խիստ հակառակն է այդ, ո՛վ դուք—գիտակից ժողովուրդ և՛ գործունեայ երիտասարդութիւն, բայց ո՛չ դու քահանայական դաս, որ անիծված ես ամեն պարագայում էլ ռէակցիօնէր և շահամոլ հանդիսանալու, այո, դիմեցէք սինոդ, որովհետև սինոդը վաղուց համոզված է խնդրի իրաւացի լինելուն և որից է կախված իսկապէս այդ օգտաւէտ փոփոխութիւնը, բայց առիթ չունի գործին ձեռնամուխ լինելու:

Գրելը և մրոտելը—մեր հաստակաշի դարում—ոչինչ չեն շինում. փորձով գիտենք այդ:

Դէհ, ուրեմն, գործի դիմեցէք, բայց ինչպէս որ հարկն է:

«Idem»

ԶԱՐՄԱՆԱԼԻ Է

Կովկասում համարեա անկիւն չը մնաց, ուսկից բողոք չը լսվէր մեր «ազգային կառավարիչների» ապօրինի, սանձարձակ և պատժելի արարքների դէմ: Սակայն, չը նայելով այդ հանգամանքին, դեռ ևս գոյութիւն ունեն այնպիսի միամիտներ, որոնք յաւակնութիւն ունեն կարծելու, կամ նոյնիսկ մաքով անցկացնելու, որ այդ բոլորը հնարովի կամ չափազանցեցրած «շինովի բաներ» են, որոնք այսպէս թէ այնպէս մամուլին են տրվում լոկ այն նպատակով՝ որ Դաշնակցութեան առանց այն էլ ընկած վարկը ձգեն:

Ո՛չ, պարոններ, այդքան միամիտ լինել չէ կարելի: Դանակն արդէն ոսկորին է հասել... Հաւատացէք, մեր համբերատար ժողովուրդը, առանց այն էլ բազմաթիւ անկիւններից կեղեքվող ու քերթվող ժողովուրդը այլևս անհնարին է համարում կրելու ազգային կեղեքիչների ծանր և դաժան լուծը... Նա արդէն սթափվել է, պարոններ, նա խնդրում է բաւականանալ այն շահատակութիւններով, որոնց այսքան ժամանակ ենթակայ եղաւ խեղճ ու կրակ ժողովուրդը...

Մինչև այժմս էլ դեռ լինում են առարկողներ, որոնք ասում են. «կարող է պատահել, որևէ տեղ տեղական դաշնակ. կազմը իր կոչման բարձրութեան վրա կանգնած չէ եղել: Ինչու և այդպիսի պայմաններում շատ էլ չը պէտք է զարմանալ, որ ճնշումներ են տեղի ունեցել կամ այժմս էլ եթէ ունենում են»:

Բայց, ասացէք, անկեղծ սրտով ասացէք, պարոններ. վերցնենք հէնց ամենամինիմալ չափը. ցոյց տուէք ինձ մի «որևէ տեղ», որ Դաշնակցութիւնը իր կոչման բարձրութեան վրա լինի կանգնած:

Երևի, դուք այդ հարցին պատասխանելու համար կը վերցնէք մի այնպիսի վայր, որտեղից դաշնակցականների դէմ հրապարակական բողոք չէ լսվել. և ամենայն վստահութեամբ մատնանիշ կանէք այդ սքանչելի «Երուսաղէմի» վրա: Այո:

Եթէ այդպէս, ապա վերցնենք, յարգելի ընթերցող, փորձի համար մի այդպիսի տեղ: Հարկաւ, քո ուշադրութիւնից փախած չի լինի, օրինակի համար, որ Դաշնակցութեան ապօրինութիւնների դէմ Նուխուց բողոք չէ լսվել. այսինքն... մամուլում երևան չէ եկել: Եւ դու երևի արդէն մտքումդ ուրախ ես, և երջանիկ ես համարում այդ գեղահրաշ վայրը: Բայց չը գիտես, որ եղեռնագործութիւններից ամենախայտառակն ու ամենազզուելին, որպիսին երևակայութիւնն անգամ կը հրաժարվի իր մէջ տեղ տալուց, կատարվել է հէնց այդ քաղաքում... «ազգային գործիչների» ձեռքով...

Ջուր ես աշխատում անտարբեր երևալ, համաքաղաքացի ընթերցող. ես պարզ նկատում եմ՝ կրծքիդ տախտակների տակ քարէ սրտիդ տակն ու վրա լինելը, որ ակամայից ակներև ես դարձնում դէմքիդ անսովոր արտայայտութեամբ...

Մի՛ նեղանար, խնդրեմ, որ քարէ եմ անւանում քո սիրտը. անշուշտ, ինքդ էլ լաւ գիտես, որ այդպէս անուանելու իրաւունք ունիմ... այլապէս, չէ՞ որ դու այն աստիճանի սառնասիրտ և անտարբեր չէիր լինի՝ համաքաղաքացի ընկերներից եղեռնական կորուստի նկատմամբ. չէ՞ որ, եթէ սրտերնիդ քարէ չը լինէր, մի ա՜խ գոնէ կը քաշէիք. և այդ «ա՜խը» կը միանար մեր դժբաղդ ժողովրդի տառապանքի և հեծեծանքի դառն արդիւնք—«ախ»-երի հետ և մի գուցէ արձագանք տար մեր «ազգային» բռնակալների սրտում:

Եւ դու, Նուխեցի ընթերցող, արդէն հասկացած կը լինես՝ թէ ինչ եղեռնի մասին է խօսքս. դու շատ լաւ գիտես, թէ բռնակալների կատարած բազմաթիւ եղեռնագործութիւններից ո՞րը պէտք է յիշատակեմ... և ինչպէ՞ս կարող ես չիմանալ, մի՞թէ այդ հնարաւոր է, երբ մեր քաղաքի ամենափոքրիկ մանուկն անգամ վաղուց արդէն տեղեկութիւն ունի այդ մասին...

Բայց օտար ընթերցողը չիմանալով բանի էութիւնը, երևի սրտատրոփ սպասում է փաստին...

Սակայն, սիրելի ընթերցող, ամենից առաջ դուն ինձ խօսք տուր՝ որ անասելի գաղտնութիւններն ու ո՛չ մարդուն միայն յատուկ չը լսված և չը տեսնված եղեռնագործութիւններն երևան հանելն ու դատափետելը քո բառարանում ևս «մատնութիւն» չէ նշանակում:

Խօսք տուր, որ անկեղծ վերաբերմունք ցոյց կը տաս ասածներիս, և այն ժամանակ միայն ես կը պատմեմ քեզ մի ցաւալի իրողութիւն. բայց ինչու մի. ո՛չ. այդպիսի շատ ցաւալի եղելութիւններ, որ, եթէ իսկապէս սիրտդ քարից կամ կաւից չէ, ապա մեծ քաջութիւն պէտք է ունենաս աչքերիցդ դառն արտասուքի հեղեղը զսպելու....:

Սակայն ես լռում եմ... լռում, որպէս մեր քաղաքի ճնշված հասարակութիւնը. թող փաստեր պահանջէն, և ես հեղեղի պէս կը թափեմ այն ձեր առաջ... Եթէ երբեմն «ազգային», իսկ այժմ «սօցիալիստ» պ. պ. պարագլուխներին յայտնի չեն այն քստմնելի արարքները, որ տեղի են ունեցել մեր քաղաքներում և գաւառներում, և եթէ նրանք իսկապէս նախանձախնդիր են իրանց կուսակցութեան պատւին, ապա թող՝ որ պարզերես երևան գան և փաստեր պահանջէն հրապարակօրէն: Հրապարակօրէն եմ ասում, որովհետև ես գիտեմ իմ գլխիս գալիքը, եթէ տնակումս, կամ որ աւելի վատն է, կէս գիշերին՝ փողոցում պահանջէն փաստերը...

Նուխեցի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոյեմբերի 17-ին

Քանիցս անգամ կարդալով և լսելով Էջմիածնում տեղի ունեցող լկտի և զզուելի դէպքերի մասին, որ կատարվում են սովորաբար դիմակաւորված «Դաշնակցութեան» միջոցով, որ «ազատարար» իրանց եռեւից քաշ են տալիս ժողովրդի անկիրթ և գռեհիկ խաւերը, որպէս սև հարիւրակներ, և հակառակ իրանց կոչման՝ անամօթաբար ոտնատակ անելով ժողովրդին վիրաւորում են նրա խղճի և հոգու խոր զգացմունքը, ամեն ինչ ծառայեցնելով իրանց կրքին ու շահերին:

Վերջին քստմնելի և զզուելի ոճիրն էլ, ինչպիսին է՝ անտեղի և անպատկառաբար ծերունի մարդու, Սուքիաս արքեպիսկոպոսի թաղումը, գալիս են լրացնելու այդ կուսակցութեան անծայր քմահաճոյքն ու բռնութիւնները, որին զոհվել և զոհվում է մեր խեղճ ժողովուրդը ինչպէս կոյր գործիք:

Մենք՝ ի ներքոյ ստորագրեալներս, բողոքում ենք այդ բոլորի դէմ, արտայայտելով մեր նողկանքը, զզուանքը և զայրոյթը ու պահանջում վերջին դէպքերի համար հասարակական լայն դատաստան:

Կ. Դանիէլեանց, Ա. Յովակիմեանց, Էջմիածնեցի, Խ. Յովհաննէսեանց, Տ. Կանայեանց, Վ. Շահսուարեանց, Ա. Մուրադեանց, Ի. Անանեանց, Ս. Աւակիմեանց:

Գանձակ, նոյեմբերի 12-ին

«Մշակի» № 246-ում պ. Ա. Սահակեանի «Քահանաների կրկնամուսնութեան հարցի քննութեան ժողովը Գանձակում» վերնագրով յօդուածում սպրդել են սխալներ թէ կիրակի օրվայ ժողովում և թէ ըստ Սահակեանի այլ շրջաններում մի քանիսների արտայայտված կարծիքների մէջ և ընթերցողը ակամայ այլ կերպ է ներկայացնելու այս կամ այն անձի կարծիքը քահանաների կրկնամուսնութեան հարցում:

Ես կիրակի օրը ժողովին մասնակցած չեմ, կամ ինչպէս պ. Սահակեանն ասում է՝ քարը գցել և հեռացել եմ. ես իմ կարծիքս հանգամանօրէն պարզել եմ առաջին անգամ պ. Աբրահամ Թէմուրեանի ընտանեկան շրջանում և երկրորդ անգամ ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում մի քանի ժողովականների առաջ, հանգուցեալ բժիշկ Թէմուրեանի թաղման օրը. իսկ երկրորդ անգամ խօսել եմ կիրակի օրը, ամսիս 5-ին, ս. Յովհաննէս եկեղեցու բակում մի քանիսների ներկայութեամբ: Իրողութիւնը այս է. պատարագից յետոյ, երբ ս. Յովհաննէս եկեղեցու բակի մի անկիւնում կանգնած ծանօթների հետ խօսակցութեան մէջ էի, Գանձակի յաջորդ հայր Կորիւն վարդապետը եկեղեցուց դուրս գալուն պէս մօտեցաւ մեզ և դիմեց ինձ՝ հրաւիրելով մասնակցել ժողովին, ուր քննվելու է քահանաների կրկնամուսնութեան հարցը: Ես պատասխանեցի թէ. «Դուք գիտէք արդէն, հայր Կորիւն, որ ես սկզբունքով համաձայն եմ դրականապէս վճռել այդ հարցը, բայց ի նկատի ունենալով մեր ժողովրդի կուլտուրական զարգացման աստիճանը, վաղաժամ եմ համարում այդ հարցի դրականապէս լուծումը. ես երեսուն տարուց աւելի գործում եմ ժողովրդի մէջ, ճանաչում եմ նրա ցաւերը և համոզված եմ, որ քահանաների կրկնամուսնութեան հարցը դրականապէս վճռելով՝ երկպառակութիւններ ենք առաջացնելու ժողովրդի մէջ: Եթէ կամենաք ես աւելի առաջ եմ գնում և ասում եմ՝ թէ գուցէ հարիւր կամ հազար կամ երկու հազար և աւելի տարիներից յետոյ ժողովրդի կուլտուրական կեանքը քահանաների կաստայի գոյութիւնը աւելորդ կը համարէ, փոխարինելով դրանց աշխարհական բարոյագէտ քարոզիչներով, բայց այդ չէ նշանակում թէ այժմ պէտք է բարձրացնել քահանաների լինելու կամ չը լինելու հարցը: Հազար ու մէկ ցաւեր ունինք մենք, որոնց մասին անշուշտ հարկաւոր է հոգալ, օրինակ չհասութեան հարցերը, որոնց անփոյթ թողնելով՝ մեր ազգային մայր եկեղեցին զրկվում է իր հարազատ զաւակներից, ինչպէս մօտ ժամանակներս իմ ընկերակցի որդին չհասութեան պատճառով ստիպվեց կաթօլիկաց եկեղեցու գիրկը մտնել»: Այս մեր խօսակցութեան ժամանակ մօտեցաւ մեզ պ. Յովսէփ Մելիք-Բէգլարեանը և բարձր գոռալով, հրամայական եղանակի ներկայով բացականչեց. «Խուժանի վրա հարկ չը կայ ուշադրութիւն դարձնել, քանի որ նա անկիրթ է, և ուժով պէտք է մտցնել ամեն մի նորաձևութիւն, վերանորոգութիւն և ահա այս «խուժան» բարձր և անվայել կերպով արտասանած բառը պատճառ դարձաւ ժողովրդի այլ և այլ կողմերից գումարվելուն. և ճշմարիտ է, ժողովուրդը յուզվեց. «մեզ անարգում են» լսվում էր այս և այն կողմերից, և երբ Կորիւն վարդապետը հրաւիրեց ժողովրդին եկեղեցի մտնել քահանաների կրկնամուսնութեան հարցը քննելու համար, յուզված, անարգված ժողովուրդը, չը նայելով Կորիւն վարդապետի ջանքերին՝ դրականապէս գլորեց այդ հարցը:

Ես եկեղեցի չը մտայ, քանի որ վիճել եկեղեցու մէջ, նրանց հետ, որոնք գոռալով և վիրաւորական եպիտետներով են ուզում համոզել իրանց հակառակորդին, իմ կողմից սրբապղծութիւն կը լինէր:

Մի նկատողութիւն ևս Թղթակից պ. Սահակեանին: Իւրաքանչիւր Թղթակից ունի իրաւունք պաշտօնապէս բացված ժողովներում արտայայտված մտքերը իր Թղթակցութեան նիւթ դարձնել, բայց մասնաւոր շրջաններում կամ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ արտասանած սրա կամ նրա կարծիքը, Թղթակցութեան առարկայ դարձնելուց առաջ, քաղաքավարութիւնն է պահանջում կանխապէս հեղինակների համաձայնութիւնը խնդրել, որը ունենալու է և այն օգուտը, որ հեղինակների կարծիքները առանց Թիւրիմացութիւնների ճշտութեամբ կը տպագրվեն: Ահա ձեզ օրինակ, բժշկապետ պ. Գերասիմ Մելիք-Բէգլարեանը Թէպէտ և կիրակի օրը ժողովում մասնակցել է, բայց մի բառ անգամ արտասանած չէ այդ խնդրի վերաբերմամբ: Բացի այս, պ. բժշկապետը յանձնարարել է ինձ յիշել, որ ինքն՝ պ. բժշկապետը ոչ մի տեղ և ոչ մի շրջանում քահանաների կրկնամուսնութեան հարցում համակրութիւն տուած չէ, այլ միշտ զարգացրել է այն միտքը Թէ՝ քահանաների կրկնամուսնութեան հարցի քննութիւնը և նրա դրականապէս վճռելն այժմ վաղաժամ է:

Բժշկապետ՝ Գ. Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Ա. Կ. Մ-ից 3) րուբլի, 2) Մերվից—Ս. Մելիք-Ասլանեանից 10 ր. 35 կոպէկ:

Մենք ստացանք հանգուցեալ դերասան Գէորգ Պետրոսեանի ընտանիքի օգտին. 1) Մօսկվայից, պրոֆեսօր Գր. Խալաթեանից—10 րուբլի, 2) Սարգիս Սամուէլեանցի հարսանիքի ժամանակ, Քրիստափոր Անիեանցի ձեռքով հաւաքված 15 րուբլի: Ընդամենը նախկին ստացվածների հետ 185 րուբլի:

Հայուհեաց որբախնամ ընկերութեան օգտին կայանալիք ներկայացումը, որը լինելու էր սոյն ամսի 20-ին, յետաձգվում է յաջորդ երկուշաբթի, նոյեմբերի 27-ին, որովհետև նոյեմբերի 21-ին ռուսաց եկեղեցական տօն է գեներալ-նահանգապետը Թոյլ չէ տուել նախօրեակին ներկայացում լինի: Տոմսակները չեն կորցնում իրանց ոյժը:

Երէկ, քաղաքային բարակներում հաշւել են սկարլատինով հիւանդացած 115 հոգու: Հիւանդութիւնը քաղաքում չէ Թուլանում:

Ի նկատի ունենալով, որ Մետեխի բանտում ահագին քանակութեամբ բանտարկեալներ կան և որ բանտը լիքն է արդէն, Կովկասի Փոխարքան Թոյլատրել է փակել բանտին կից գտնվող տպարանը և տպարանի շինութիւնը յատկացնել բանտարկեալներին պահելու համար:

Նոյեմբերի 16-ին, երեկոյեան ժամը 6-ին Գեօրգիեվսկի հրապարակի վրա մի անյայտ չարագործ ատրճանակի 4 հարուածով մահացու կերպով փորից վիրաւորել է Մարիամ Մարգարեանցին (20 տարեկան). բացի դրանից գնդակներից մէկը դիպել է պատահմամբ հրապարակով անցնող Վարվ. Ս. Կաշեանցին և աջ ոտից վիրաւորել է: Ատրճանակ արձակողը անյայտացել է, իսկ Մարգարեանը և Կաշեանը ուղարկվել են Միքայէլեան հիւանդանոցը:

Ստացանք Արամ Փաշայեանի «Հայ գիւղի Լէյնչու տղա» գրքոյկը, 16 երես, գինն է 5 կոպէկ:

Թիֆլիսից «Իրշադ» լրագրին հաղորդում են, որ պարսից ընդհ. հիւպատոս Մուֆախխամը Սալթանէն բամազանի վերջին օրերում շատ ճոխ, մեծածախս ընթրիքներ և խնճոյքներ է տուել պարսիկ յայտնի վաճառականներին: Բայց, ասում է նոյն Թերթի Թղթակիցը, այդ գիշերներին շատ պարսիկ աշխատաւորներ չեն գտել նոյն իսկ չոր հաց լուծելու համար իրանց ծոմը:

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը Թոյլատրել է «վրացիների մէջ գրագիտութիւն տարածող վրաց ընկերութեանը» դեկտ. 10-ին ժողով գումարել՝ ընկերութեան 1904 և 1905 Թ. գործունէութեան հաշիւները քննելու, 1906 և 1907 Թ. մուտքերի և ծախքերի նախահաշիւը հաստատելու, ընկերութեան կանօնադրութեան մի քանի կէտերը փոփոխելու և ընկերութեան նոր անդամներ ընտրելու համար:

Երկուշաբթի, նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի նահանգական դատարանի շինութեան մէջ կը կայանայ Կովկասի իրաւաբանական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը:

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետը նորից Թոյլատրել է հրատարակել Թիֆլիսում «Лѣтопись патріотическаго общества въ Тифлисѣ» անունով դադարեցրված լրագիրը:

Գանձակում, նոյեմբերի 17-ի գիշերը, քաղաքի ծայրում, մի տան մէջ գտնված են 20 ռումբ: Ռումբերի պահեստի տանը գտնվող սենեակում քնած հինգ հոգին ձերբակալված են:

(«Հեռ. Գործ.»)

Բագուի մահմեդականների Բարեգործական Ընկերութեան նախագահ Հաջի Զ. Ա. Թաղիեվ յայտնել է գեներալ-նահանգապետին, որ ընկերութեան վարչութիւնը ցանկանում է ի նպաստ Շուշու մահմեդական աղէտեալներին հանգանակութեան ձեռնարկել և այդ առիթով խնդրում է հարկաւոր Թոյլտուութիւնը:

Սրանից մի քանի ժամանակ առաջ, չորս մահմեդականներ, Բագւում, զանազան կառավարչական ծառայողների վրա մահափորձ կատարելիս բռնվելով պէտք է յանձնվէին զինւորական դատարանի: Ամսի 14-ին յիշեալ մահմեդականների դատն սկսվել է: Հարցաքննութեան համար, երբ նրանց ուզեցել են բանտի վարչութիւնից, բանտային տեսուչը յայտնել է, որ ոստիկանատան քննիչի վճռի համաձայն յիշեալ մահմեդականները արձակվել են բանտից: Այս տարօրինակ գործի համար քննութիւն է նշանակվել և պարզվել է, որ երբ Թէ ոստիկանական քննիչը ոչ մի տեղից հրահանգ ստացած չը լինելով, որ յիշեալ չորս մահմեդականները պէտք է յանձնըվեն զինւորական դատարանի, այլ պէտք է դատվէին քաղաքացիական պարզ դատարանով, իր կողմից քննութիւն է կատարել և նրանց անպարտ ճանաչելով արձակել է բանտից: Այդ պատճառով էլ այդ 4 մահմեդականների գործը մի ուրիշ ժամանակվայ (?) է յետաձգվել:

Բագւում, Պարապետի վրա, անցեալ օրերում հրացանաձգութիւն կատարող և ձերբակալվող չորս հայերը յանձնվել են զինւորական դատարանին, որի վճիռը դեռ ևս անյայտ է:

Բագուի բանտային կառավարիչ Մեդվեդեվ առանց իրանից բարձր իշխանութեան Թոյլտուութեան, քաղաքային յանցաւոր Պաւլովին իր հետ շուկայ տարած լինելով, առևտուր արած միջոցին մի քանի անյայտ անձինք աշխատել են Պաւլովին փախցնել: Պաւլովը ըսկըսում է արդէն փախչել, երբ վրա են հասնում պահակ զինւորներ և բռնելով նրան յանձնում են ոստիկանութեան: Դէպքի մասին գեներալ-նահանգապետին լուր տըվելով Մեդվեդեվը արձակվում է իր պաշտօնից և քննութեան ենթարկվում:

Ինչպէս հաղորդում են «Կ. Ք.» լրագրին, Րկվիա և Սօմխեթի կայարանների միջև անցնող երկաթուղու գնացքի պօստատար վագօնից գողացված 20,000 րուբլուց վճռված է պահանջել Ճիաթուրա գիւղից (15,000 րուբլի) և յիշեալ կայարանների միջև գտնվող գիւղերից:

Կազանից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին, որ ազատագրական շարժման մէջ կասկածվելու համար կալանաւորվել է Սպասկի բատալիոնի օֆիցէր Ժիլոխինը:

Վարշավայի ժանդարմների դիվիզիօնի պօրուչիկ Դ. արտաքսված է ծառայութիւնից իբրև պաշտօնին անհամապատասխան օֆիցէր: Արտաքսելու պատճառը եղել է այն, որ յիշեալ օֆիցէրը յայտնել է Վարշավայի ոստիկանապետին Թէ ինքը անպատրաստ է զգում իրան յանձնված խուզարկութիւնը կատարելու: Պօրուչիկ Դ. այդ բանը ասել է այն պատճառով, որ ժանդարմների դիվիզիօնի օֆիցէրները առհասարակ խուզարկութիւններ կատարելու չեն ուղարկվում: («Рѣчь»)

Պետերբուրգի լաւատեղեակ շրջաններում լուր է պտտում, որ կոմս Վիտտէն առաջարկութիւն է ստացել ստանձնելու ռուսաց արտաքին առևտրական բանկի վարչութեան նախագահի պաշտօնը: («Сегодня»)

Ոստիկանական դէպարտամենտը տեղեկութիւններ է ստացել Ֆինլանդիա ուղարկված իր գործակալներից, որ այնտեղ գտնված Պետական Դումայի աշխատաւոր խմբակի նախկին պատգամաւոր անդամները գնացել են Ստօկհօլմ: Այնտեղ գտնված սօց.-յեղափ. և սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնների, նոյնպէս և ռազմիկ կազմակերպութիւնների ղեկավարները գնացել են Ժընեվա:

(«Страна»)

Րիգայից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ Լիֆլանդիայի նահանգապետը գաւառապետներին կամ ոստիկանական իշխանութիւններին շրջաբերական է ուղարկել, որով հրամայում է նրանց անտեղի անգթութիւններ չը գործադրել ազգաբնակութեան դէմ և չը գրգռել նրանց ոստիկանութեան ձեռք առած միջոցների դէմ դիմադրութիւն ցոյց տալու համար: Նախկին ոստիկաններին նահանգապետը սպառնում է խիստ կերպով պատժել, նոյնիսկ հեռացնել պաշտօններից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 նոյեմբերի: Բարձրագոյն հաստատութիւն են գտել մինիստրների խորհրդի այն որոշումները, որ վերաբերում են առևտրական հիմնարկութիւնների, պահեստների և գրասենեակների ծառայողների նորմալ հանգիստը ապահովելուն և որոնք իրանց ոյժի մէջն են մտնելու հրատարակվելուց 6 ամիս յետոյ: Մանրամասնութիւնները համարեա նոյն են, ինչ որ արհեստանոցների ծառայողներինը: Գլխաւոր և որոշվող կէտերն են. 1) Ամեն տեսակ առևտրական հիմնարկութիւններում առևտուրը մշտական է. շուկաներում և տօնավաճառներում՝ ման գալով, շրջեցնելով, ի բաց չառնելով ոգելից խմիչքների առևտուրը—ինչպէս մասնաւոր խանութներից այնպէս և պետական պահեստներից, ինչպէս գրասենեակների և պահեստների ծառայողների պարապմունքները չեն կարող 12 ժամից անցնել օրական: Ուտելեղէններ և խմիչքներ վաճառող հիմնարկութիւններ, գարեջրատները, գինետները, լողարանները և բաղանիքներում բաց են լինելու օրական 15 ժամ: Կարելի է վաճառել ծխախոտ և ուտելեղէն նաև շարժական խանութներից: 5) Ծառայողների պարապմունքները և առևտուրը արգելվում է կիրակի օրերը: Անպայման արգելվում է առևտուր անել Զատկի առաջին օրը և Ծնընդութեան օրը: Հիւրանոցներին կից գտնվող բուֆէտները կարող են բաց լինել օրական 15 ժամից ոչ աւել: 13) Այս կանօնները չեն տարածվում դեղատների վրա: Այս կանօնները մանաւանդ անչափահասների և կանանց վերաբերմամբ չը կատարելու դէպքում, մեղաւորը ենթարկվում է միամսեայ բանտարկութեան կամ 100 րուբլի տուգանքի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 նոյեմբ.: Ազնւական ընկերութիւնների լիազօրների արտակարգ համագումարը, երեք օրեայ վիճաբանութիւններից յետոյ, ընտրողական օրէնքը փոփոխելու հարցի նկատմամբ, կազմել է հետևեալ բանաձև.—Ընտրութիւններին դասային խըմբակցական խառը սիստեմ—այսինքն ընտրութիւններ՝ և ըստ դասի, ուր այդպիսիները կազմակերպված են, և՛ ըստ բնական կեանքի խմբակների, մտցնելը և ակտիվ ու պասսիվ իրաւունքների որոշելը ներկայ ընտրողական պայքարին անհրաժեշտ ճանաչել: Գաւառներում ընտրութիւնները կատարելիս մանր հողատէրերից մի առանձին խմբակ զատել, իսկ նահանգական ընտրողական ժողովին հաւասարեցնել գիւղացիների իրաւունքները ազգաբնակութեան միացած խմբակների իրաւունքների հետ, ընտրութիւնները կատարելով չորս խմբերով (գիւղացիներ, խոշոր հողատէրեր, մանր հողատէրեր և քաղաքների ներկայացուցիչներ): Բայց միացած տեղերը պէտք է լրացնել ընտրողների ընդհանուր մասսայից ընտրված պատգամաւորներով:—«Товарищъ»-ում հաղորդված էր, Թէ երբ պաշտօնաւոր շրջաններում, ըստ երևոյթին առաջիկայ ընտրութիւնների աչքի առաջ ունենալով, հարց է բարձրացրած՝ վերացնել զեմստվային գնահատող-ստատիստիքական բիւրօների պատճառաբանութեամբ, որ դրանք ներկայ մօմենտին անօգուտ են: Այդ լուրը սխալ է. այդ բիւրօները վերացնելու հարցը բնաւ չէ յարուցված:—Լրագիրներից մի քանիսների մէջ հաղորդված էր, երբ կառավարչական շրջաններում վճռված է, որ առաջիկայ ընտրութիւններին կուսակցութիւններից և դաշնակցութիւններից և ոչ մէկը բացի միապետական կազմակերպութիւններից և հոկտ. 17-ի դաշնակցութիւններից—օրինաւոր չի ճանաչվի: Այդ լուրը մտացածին է:

ԿԱԶԱՆ, 17 նոյեմբ.: Մի փողոցում մի ագիտատոր ժողովելով ամբոխին, սկսել է հակակառավարչական ճառ արտասանել. ամբոխը երկար լսել է լռութեամբ. իսկ յետոյ յարձակվելով նրա վրա—մի լաւ ծեծել է: Ոստիկանութիւնը մեծ դժուարութեամբ է խլել նրան ամբոխի ձեռքից: Այժմ նա բանտարկված է:

ԲԵՐԼԻՆ, 17 նոյեմբ.: Կործանված գործարանի վնասն 2 միլիօն մարկի է հասնում:

ՄՕՍԿՎԱ, 17 նոյեմբ.: Զինված ապստամբութեան գործի առիթով—Մօսկվայի դատաստանական պալատը երէկ հարցաքննել է ոստիկան-վկաներին: Ի նկատի ունենալով վկաների շատութիւնը, նրանց խմբակների է բաժանած, իւրաքանչիւրի մէջ որոշելով 30 մարդ, որոնք ցուցմունքներ են տալու նրանց որոշեալ ժամերին:

ԲՐԻՆՍԿ, 17 նոյեմբ.: Ռումբերի պահեստներ գտնելու պատճառով, ոստիկանութիւնը եռանդով գործի է կպել: Յեղափոխականները ձերբակալվում են, իսկ նրանց կազմակերպութիւնները խեղդվում:

ՄԱԴՐԻԴ, 17 նոյեմբերի: Թագաւորը հաստատեց նոր կաբինետի հետևեալ կազմը. մինիստր-նախագահ՝ Մօրէտ, արտաքին գործերի մինիստր՝ Պերէդց Կաբալէրօ, ներքին գործերի՝ Բարրօշօ, ֆինանսների՝ Դէլգադօ, հասարակական աշխատանքների (?), զինւորական՝ Լուկվէ, ծովային՝ Ալլրա, արդարադատութեան՝ Րօմանօվս. ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պորտֆէլը բաց է մնացած:

ՉԱՅԼԱՒ, 17 նոյեմբերի: Կամէնկա գիւղում մի անյայտ անձնաւորութիւն խնդրել է կօշկակար գիւղացուն Թողնել գիշերել: Գիշերը, նա մորթել էր գիւղացու 5 հոգուց բաղկացած ընտանիքը, ի մէջի այլոց ծծկեր երեխային, և գողանալով երկու զոյգ հին կօշիկներ, անյայտացել է:

ՐԻԲԻՆՍԿ, 17 նոյեմբերի: Բացվում է խաղաղ վերածնութեան կուսակցութեան տեղական բաժին:

18 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ, 17 նոյեմբերի: Պարզվել է, որ Վիտտէնում սպանվել են 30 հոգի, ծանր վիրաւորվել են 150, Թեթև՝ 180 հոգի:

ՎԱՐՇԱՎԱ, 17 նոյեմբերի: 4 հոգի մահվան պատիժ են կրել պրիստաւ Կօվալսկու օգնականին սպանելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 նոյեմբերի: Բարձրագոյն հրամայված է Ֆինլանդիայի պետական գանձարանը ազատել—Ֆինլանդական ժանդարմական վարչութեան վրա անվելիք ծախքերից: Այն լուրը, որ իբր պալատի մինիստր բարօն Ֆրէդէրիկսը Թողնում է իր պաշտօնը, և նրա յաջորդ նշանակվում է իշխան Օբօլենսկին,—հիմքից զուրկ է:

ՄԻՆՍԿ, 17 նոյեմբերի: Այն հարցին, Թէ պաշտօնեաները իրաւունք ունեն հոկտ. 17-ի դաշնակցութեան անդամ գրվել, Ստօլիպինի հրամանով պատասխան է տրված, որ պաշտօնեաներին չէ արգելվում մասնակցել լէգալ կուսակցութիւններին և հոկ. 17-ի դաշնակցութեանը պատկանելը չէ հալածվում:

ՎԻԵՆՆԱ, 17 նոյեմբերի: Րէյխստրատը ընդունել է մասնաժողովի առաջարկը՝ Բօհեմիային իրաւունք տալ ուղարկել 75 չեխերի և 55 գերմանացիների: Պալատը մերժեց չեխ Զագվօրսկու ուղղումը՝ չեխերի համայնքը գերմանական վիճակից բաժանելու: Այս հանգամանքը մեծ աղմուկ բարձրացրեց: Չէխ-արմատականները յարձակվեցին նախագահական ամբիոնի վրա և Թղթերը շպրտեցին յատակի վրա: Նախագահը նիստը ընդհատեց: Չեխեր Լօխվաչը և Ալբերդը սկսեցին մենամարտել միմեանց հետ. նրանց բաժանեցին: Նիստը վերսկսելով, նախագահը ցաւակցութիւն և արհամարհանք յայտնեց: Չեխերը բողոքեցին: Ապա նիստը շարունակվեց առանց լուրջ միջնադէպերի:

«ՄՇԱԿ»-ի ներկայ համարի հետ ուղարկվում է Ռուսաստանի մեր բոլոր բաժանորդներին կրկնակոչիկների յայտարարութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզանօս. հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերքաբուժութեան:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Յ. Գուրջենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
(Կ.չ.ու.) 25—100

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8: Կանանց համար 12—1 ժամը:
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15:
(ա. օ.) 58—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 278—300

Շուտով լոյս են տեսնելու Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
խմբագրած
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ—(պատի 50 կոպ., գրպանի—20 կոպ.)—բոլորովին նոր բովանդակութեամբ:
Պատի օրացոյցի տախտակը—մի քանի գոյներով տպած «Մայր Հայաստանի» պատմական պատկերը և գիւղացի ու բանւոր աշխատաւորների էմբլեմները:
Գումարով գնողները Թող այժմեանից դիմեն Тифлисъ, Мадатовская № 5, Е. Топчяну, կամ «ՓԱՐՈՍ» գրախանութ, Երևանեան հրապարակ, Նիկ. Մատինեանին:
1—5

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԲԱՑ ՆԱՄԱԿ

Դոկտ. Գ. Փաշայեանի «Դպրոցական Առողջապահութիւն» գրքի առաքումը մի քանի բաժանորդներին՝ դժբաղդաբար ուշացել է շնորհիւ Բաթումի գործակալի անփութութեան: Այժմ յայտնում ենք, որ չը ստացողները կարող են դիմել՝ «Բաթում, Տուրեցկի բազար, եղբայրք Ալպերտեան» հասցէով, նաև տալով իրանց հասցէները:

Ն. Թաթիկեան

(Կ. ե.) 1—2

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
ցանկանում է
ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ.
Հասցէն «Մշակի» խմբագրատուն:
(ե. հ. կ.) 1—5

Բժիշկների ընկերութեան բաժանմունքում երկար բժշկվելուց յետոյ, ելէքտրաքարշից վայր ընկնելու պատճառով մեր ընտանիքի յարգելի անդամի

ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—Թիֆլիսեցի տնատէր Սէրգէյ Ակիմովիչ Աւետիսովը, նոյեմբերի 12-ին Թաղման ժամանակ իր վրա վերցրեց հանգուցեալի մեծ որդի—Սիմէօնի կրթութեան և ուսման գործը—մինչև որևէ դպրոցում լիակատար դասընթացքի աւարտումը: Յայտնելով մեր անկեղծ շնորհակալութիւնը, մենք, հանգուցեալ Նիկօլայի ծնողները, մեր սրբազան պարտականութիւնն ենք համարում՝ Աւետիսեանի այդօրինակ բարեգործ վարմունքի մասին ազդարարել ընդհանուրի գիտութեան. Սիմէօն, Մարիամ, Յովսէփ, Իլիա, Դաւիթ, Նինա, Ալէքսանդր, Միքայէլ, Շամշէ, Աչա, Օլգա Մաչավարիանիներ:

1—1

Թիֆլիսի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու ծխական Հոգաբարձութիւն յայտնում է նոյն եկեղեցու ծխականներին, որ

ԱՅՍՕՐՎԱՅ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի Թաղման պատճառով յետաձգվում է անորոշ ժամանակով:

1—1

Լոյս տեսաւ եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ
1907 Թ.
„ՇԻՐԱԿ"
պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ պատկերազարդ
ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ բացի օրացուցական բաժնից պարունակում է վաճառականական, օրէնսգիտական, բժշկական, տնտեսական, ճանապարհորդական, արհեստագիտական, գիւղատնտեսական, կենսագրական, տոմարագիտական, գիտական, բանաստեղծական—վերածնութեան մեղեդիներ, պատմական—Նաթան Հալլ (Ամերիկայի անկախութիւնից), Ազգային Ժողով (ֆրանսիական յեղափոխութիւնից), Ռամկավարութիւն, Սահմանադրութիւն, Ի՞նչ է ազգութիւնը, Յեղափոխութիւնների պատմութիւնը, Տաճկահայոց սահմանադրութիւնը, Օգտակար խորհուրդներ, Գիտական զուարճալիք, Խնդիրներ, Վիճակներ, Րեբուսներ և այլ և այլ հետաքրքիր տեղեկութիւններ:
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների պատմական բացատրութիւններ, հայոց ազգային սովորութիւններ, բժշկական, առողջապահական, Թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, գիւղատնտեսական տեղեկութիւններ, խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց: Ազգային քնար, վերածնութեան մեղեդիներ, նշանաւոր դէպքեր հայկական նորագոյն կեանքից և հայոց պատմութիւնից: Տնտեսական, արհեստագիտական, խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւններ, նոր անէկդոտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական, յեղափոխական երգեր, լէլէներ, արկածալի և հերոսական դէպքեր յեղափոխական աշխարհից, հետաքրքիր տեղեկութիւններ զուրանի և մահմեդական վարդապետութեան մասին, եայլն եայլն:
Իւրաքանչիւր առաջին երեսի վրա կայ մի մի բանաստեղծական հատուած հայ և օտար նշանաւոր բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգային և հասարակական խնդիրները:
ՏԱԽՏԱԿԸ մի գեղարուեստական սքանչելի նկար է վեց գոյնով, պատրաստած լիտօգրաֆիայում, որ ներկայացնում է «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» զարդարված «Հայկական դրօշներով» (դերբեր), մի նկար, որ կարող է սենեակի զարդ ծառայել:
«Շիրակ» օրացոյցները զարդարված են գունաւոր պատկերներով:
Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը կարող են ստանալ ձրի:
Գները՝ ծոցինը 20 կ., պատինը 50 կ.: Գումարով գնողներին ծոցինը 15 կ., պատինը 35 կ.:
Ցանկացողները Թող շտապեն, որ պատուէրները կարելի լինի ճշտութեամբ կատարել:
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian (Caucase).
6—15 Կարապետ Ափինեան

3 ռուբլի 3 ռուբլի
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ"
[illegible]
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇՄԸ,
[illegible]
Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская 24, В. Варданяну.
(ե. հ. կ.) 6—10
3 ռուբլի 3 ռուբլի

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
ԱՇԽԱՏԱՆՔ
Ժողովրդական, տնտեսական, գիւղացիական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ, ինչ որ 1906 Թ-ին, աշխատակիցների ուժեղացրած կազմով. ամեն համարում Ստոռ.-կէտի շաբաթական ֆելիէտօնով
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:
«Աշխատանքը» առանձին ուշադրութիւն է դարձնելու մեր գաւառի հասարակական և տնտեսական կեանքի վրա:
1907 Թ-ի տարեկան բաժանորդներին «Աշխատանքը» տալու է ձրի, բացի 50 համար Թերթից, բաղկացած 800 երկծալ, մեծադիր երեսներից, հետևեալ չորս գրքերը.
Տարին 4 ր.
1. «Ժողովուրդը և հողը» տնտեսական-հասարակական ուսումնասիրութիւն:
2. «Ամենալաւ վարը» մատչելի գիւղատնտեսական ցուցմունքներ:
3. «Թանկագին բոյսերի Թշնամիները եւ նրանց դէմ կռւելու միջոցները», հանրամատչելի գիտական ուսումնասիրութիւն այգեգործների, պարտիզպանների և բամբակագործների համար:
4. «Գիւղական նամակներ» զրոյցներ ժամանակակից քաղաքական-տնտեսական-հասարակական հարցերի մասին:
Բացի դա բաժանորդները ձրի ստանալու են՝
Երկու բազմագոյն, շքեղ նկարներ (14×8 վերշ.)
I «Կարկուտից յետոյ» (կուղարկվի յունվարի 15-ին)
II «Գալիս են» (կուղարկվի սեպտ. 15-ին)
ԲԱԺՆԵԳԻՆԸ
Գրքերի և նկարների հետ միասին ճանապարհածախքով
Ռուսաստանի համար
Տարին . . . . 4 ր.
Կէս տարին . . . . 2 ր. 50 կ.
Արտասահմանի համար
Տարին . . . . 18 ֆրանկ.
Կէս տարին . . . . . 10 »
Հասցէն՝ Тифлисъ, редакцію журн. «Ашхатанкъ» Бебутовская № 56.
Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Աթանասեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 58—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է արուեստական ատամներ, քիմք, քիթ և անդամահատված ծնօտների պրօթեզներ (Резекціонные протези). Ընդ. ժամերը 9—2 առ. և 4—6 երեկ.: Հասցէն՝ Վանքի փողոց, տ. № 10 (Բարօնսկայա փողոցի անկիւն):
(ա. օ.) 7—30

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Պատրաստում է աշակերտներ ու աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար: Ընդունում է նաև բեպետիրօվկա: Հասցէն «Մշակի» խմբագրատունը:
(ա. օ.) 6—10

Կ. ԱՓՐԻԿԵԱՆԻ
ՏՆԿԱՐԱՆՈՒՄ
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ամեն տեսակ պտղատու ծառերի պատուաստներ և նոյնպէս տունկեր էժանացրած գներով ծառացուցակներն ուղարկվում են ձրի ըստ պահանջման:
Հասցէն՝ Г. Гори, Тифл. губ. К. Ө. Африкіанъ.
(ե. հ. կ.) 12—15

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"
մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:
կե
Ալէքսանդր Ցարուքինով
(հ. կ. ե.) 34—100

ԾԱԽՎՈՒՄ Է
ԵՐԿՈՒ ՏՈՒՆ
մէկը Ելիզավետինսկի փողոցի վրա № 176 Անդրկովկասի երկաթուղու վարչութեան դիմաց, բանկային պարտքով, միւսը Անդրէևսկի փողոցի վրա № 74. պայմանների մասին տեղեկանալ վերոյիշեալ հասցէներով տանտէրից:
(ե. հ. կ.) 8—3

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. 5 №